

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DEGHEGADOU

ديغدادو

Հրատարակչություն Գամիտի Հ.Վ.Ը.Դ.Ի

نشرية جمعية القادسية الخيرية الأهلية العامة

Դու՛՛ն՝ Տաճար, Տաճար,
Դու՛՛ն՝ անճառ խորհուրդ սրբազան գրի,
Դու՛՛ն՝ իմաստութեամբ տնօրինեցիր
Եւ վայելչապէս
Տիարնագրելով
Տառագրեցիր
Հողէ և հրեղէն Այբուբեն հայոց:
Մարգարեական քո տեսիլքներով,
Թագաւորական քո հոգածութեամբ,
Քահանայական քո ջնօրիներով,
Վարդապետական քո իմաստութեամբ
Բարբառն հայրենի երգաբանեցիր
Քո անճառելի լի խոնարհութեամբ,
Քո մենակեացի գօրեղ ճգնութեամբ,
Ողորմածութեան քո պարգեւներով
Դու աջխարհ բերիր քաջալերութեամբ
Աստուածապարգեւ գիրն Ասքանազեան:

Իսկ քո գրերը
Դարձած պատարագ
Լոյսի ջողեր են
Արարում անվերջ
Ու մեզ պարգեւում
Ապրելու ՀԱԻԱՏՔ,
Կեանք ապրելու
Աստուածային ՅՈՅՍ,
Փրկութիւն հայցող
Դրախտային ՍԵՐ:

Հրատարակչութիւն՝ Ասողիկի Մեսրոպ Մաշտոց պոետն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Գիրերու Գիւտին 1600-ամեակին առիթով Վեհափառ Հայրապետին Յղած Սրբատառ Կոնդակը Հայ Ժողովուրդին	1
ԽՄԲԱԳԻՐ	Հարցազրոյց Ե իպտոսի Մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Տոքթ. Ռուբէն Կարապետեանի հետ	3
ԱՐԱՔԱԻ ՏԵՕԱԼԹԵԱՆ	Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 14-րդ Տարեդարձին Նշումը Գահիրեի Մէջ	7
	Ողբ. Յակոբ Համբիկեանի Յիշատակին	8
	Քեզմով Քեզի Օրհնութիւն Միհրան Ղազէլեան	9
ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՁԵՒԱԴՐՈՒՄ	Հայ Գիրերու Գիւտին 1600-Ամեակի Նշումը Գահիրէ	12
ՇԱՀԷ ԼՈՒԱՐԱՐԵԱՆ	Հրանդ Զէշիշեան Աղեքսանդրիա	13
	Անժիկ Յակոբեան - Կանիմեան	
	Հելիոպոլիսը 100 Տարեկան	14
	Սօսի Յակոբեան	
	Նոր Հրատարակութիւն	17
	Հաղորդա ղութիւն	17
	Տիար Պերճ Թերզեանի Խօսքը	18
	Շնորհակալական Նամակ Երաժշտական Քննադատ Պետրոս Ալահայտոյեանէն	19
	Գիրերու Գիւտին Եւ Ամարասի Դպրոցին Հիմնադրութեան 1600-Ամեակին Նուիրուած Գիտաժողով Արցախի Մէջ	20
	Հո եբան Տոքթ. Անի Գալայճեանի Ելոյթը Ազ ալին Առաջնորդարանի Դահլիճին Մէջ	22
	Նորքի Մանուկներու Կեդրոնին Առաջին Շրջա այութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ	22
	Ս. Թ.	
	Գիտելիքներ	23
	Իմաստուն Խօսքեր	24
	Անդամական	25
	ՀԲԸՄ-ի 100 Ամեակի Տօնակատարութիւններուն Հիմնական Յայտա իր	27
	ՀԲԸՄ-ի 100 Ամեակի Տօնակատարութիւն	28

**ԹԻ 37 Նոր Շրջան
ՇՈՎՏԵՄԲԵՐ 2005**



**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱՔՈՒՍՈՒԹԷՏՄԱՐՈՒՆ**



**SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN**

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԳԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՒՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ԴՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆ ԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԷՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐՊԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՒՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԿ ՀԱՄԱՅՆ ՀԱՎԱՏԱՑԵԱԿ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Յիշեաց զմեզ Տէր եւ օրհնեաց զմեզ» (Սղմ. ձժԳ. 12):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ Հայոց

Հորհն Աստուծոյ եւ երկնային ողորմութիւնը այցելեցին ազգիս եւ Հայաստան աշխարհիս Հայ Գրեթի երեւելի գիւտով որի 1600–ամեակը ածնախմբելու հնորհնակններն ենք այսօր: Աղօթք բարձրացնենք երկինք, քանզի «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ», պարգեւելով անձինք պսակաւոր, «որք զարդարեցին սնտրինաբար զիմաստս անեղին, Հաստատելով յերկրի զգիր կենդանի»:

Պայծառ ու պանծալի են յիշատակները, որ պիտի ուզեկոչենք:

16 դար Հեռուից մեր Հոգու առջեւ պարզուում է Հայոց կեանքի այն երջանիկ օրը, երբ Մաշտոց Վարդապետը վերադառնում էր Վաղարշապատ՝ Հայերէնի նորագիտ Տառերը սեղմած սրտին՝ Հայաստանի Համար, իր ազգի Համար ցաւացող սրտին:

Հեռաւոր ճամբորդութիւնից ուրախ էր վերադառնում: Աստուած ոճնկողի էր եղել նրա անդադրում աղօթքներին եւ օրհնել էր նրա տքնաճան աշխատանքը, օրհնել էր նրա առաքելութիւնը: «Աբ» եւ «Քե» սկիզբն Արարիչ ու վերջը՝ Քրիստոս իմաստով ծառնող էր առել 36 նշանագիր այբբենաշարը, որպէսզի Հայ ժողովուրդը մայրենի լեզուով ընթերցի Աստուածաշունչը, «եւ բոլոր մարդկանց Հաննի քրիստոսաբեր փրկութիւնը», ճանաչելի լինեն իմաստութիւն եւ խրատ, իմանալի Հանճարների խօսքը:

Հանապարհի կայաններն անցնում էր յուսառատ, քանզի գիտեր, որ Հայրենի երկրում սպասում են իրեն ընդունելու իր ջանքերի արգասիքը: Մովսէսն անգամ այնպէս ուրախ չէր, ասում է Մաշտոցի աշակերտ ու վարքագիր Կորիւնը, որով Հեռեւ երբ բազմակներին առած աստուածագիր տախտակները, իջաւ Սինա լեռից, ժողովուրդը ոսկեձող կուռքի էր երկրպագում: Մինչ Մաշտոցին անհամբերութեամբ սպասում էին ՍաՀակ Պարթեւ Կաթողիկոսը, Վրանշապուհ Թագաւորը, նախարարագունդ աւագանին, աշխարհաՀոգ դասը եկեղեցականաց, ու երբ լսեցին, թէ մօտեցել է մայրաքաղաքին, ժողովրդի բազմութեամբ ելան ընդառաջ: Եւ Արաքսի ջրերը ականատես եղան Համբիպան ինդութեանը, օրհնութեան երգերին, փառաբանական ու գոհաբանական աղօթքներին:

Աստուծոյ անանց խօսքը լսելի դարձնելու Համար սկզբնաւորուեց Հայերէն դպրութիւնը: Հայոց աշխարհի բոլոր գաւառներում Թագաւորի Հոգաձուլութեամբ եւ Հայրապետի ինամքով բացուեցին դպրոցներ, կրթութեան մանուկներ, ազատագունդ բանակը, եւ ժողովուրդն ինքը գալիս էր դէպի «աստուածային գիտութեան բացուած աղբիւրը»: Մաշտոցեան տառերը դարձան կենդանագիր խօսքի ծառայութեան մատուակներ, «Հայաբարբառ, Հայերէնախօս դարձան օրէնստուոյց Մովսէսը՝ մարգարեական գնդի Հեռ եւ առաջադէմ Պօղոսը բոլոր առաքելական գնդով Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանի Հեռ միասին»: Ու բացուեցին Հոգու անսպառ վտակները, աշակերտները ուսուցիչներ դարձան, թարգմանիչներ, մեկնիչներ, շարականագիր, պատմիչ ու իմաստասէր: Իմանալի լցիս կամարով միաւորուեց Հայոց բաժանուած Հողը ու երկատուած ազգային կեանքը: Աստուծոյ խօսքը յարգարեց ու զարդարեց Հոգիները, Հայրենի մեր երկրում սպրեյրեց փրկութեան յոյսն ու յարութեան Հաւատը: Տէրը օրհնեց իր ժառանգութիւնը, որը իրենց վկայութեան կեանքով վաստա-



կել էին Տիրոջ սուրբ առաքեալները եւ առաքելապատիւ Հաւատի մեր Հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը: Արդարեւ, «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»: Հայաստանի Համար դժուարին ժամանակում տէրեր եղան ազգին եւ առաջնորդ Հաւատարիմ Հոգեւորական ու աշխարհական իշխանաւորները մեր, «որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի Հաստատեցին զվժու սրբոյն Գրիգորի թարգմանութեամբ նշանագրութեան»:

ՍաՀակ-Մեսրոպեան դպրոցի օրհնեալ սերունդը կերտեց 5-րդ դարը Հայոց պատմութեան՝ մաքի ու Հոգու զարթոնքով պայծառ ու Հանճարագործ, նուիրումով ու Հաւատարմութեամբ յաղթական եւ նահատակութեամբ լուսազգեստ: Հոգով կրթուածը Հոգի կրթեց: Մեր պատմութեան յետագայ բոլոր դարերն առաջնորդեց Հայ մշակոյթի ոսկէ Հոնձքի սերունդը՝ Քրիստոսասեր ու Հայրենապաշտ, ազնուահոգի, լուսաւորեալ ու մտաւորական այն սերունդը, որը փորձութեան ժամին չվարանեց կեանքով պաշտպանել Հաւասն ու Հայրենին: Հայրեր ու որդիներ, ովքեր անցողիկի մեջ յաւիտենականի ճանաչումով, մեր Տիրոջ սրբազնասուրբ անունը իրենց շուրթերին, անցան ճանապարհը Աւարայրից Նուարակ: «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ», շնորհելով դար երկունքների, դար Հերոսացումի, երբ քչերի Համեմատ առաքինի գանուեցին շատերը, «որք զերկրաւոր մեծութեան փառաց խաւար կոչեցին, ապախնելով ի յոյս անմահ փեսային՝ անճառ բանին արժանի եղէն»: «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»: Շուրջ արեւը Շաւարշանի դաշտից վեր եւ առյաւէտ միաւորեց Հայոց Հաւասն ու Հայրենիքը: Հայաստանի Հողը պաշտպանուած եղաւ, թէ ոտնակոխ. կանգուն եղաւ Հայոց պետականութիւնը, թէ կործանուած, երեսունվեց տաւերով, Գրով Կենդանի միշտ պաշտպանուած մնաց Հայ Հոգին, քանզի Մաշտոցեան նշանագրերը մագաղաթին շարուելով, Հոգիներում էին գրի առել մեր ժողովրդի գոյութեան իմաստն ու խորհուրդը:

Մաշտոցեան Գրով անմահացել է մեծաքանակ Հայոց լեզուն, ու ոսկէՀոնձք արմատից բարձր բարձրացել է կանաչազարդ ծառը Հայ մշակոյթի, որոնցով ընդմիշտ մեկ ու միանական աշխարհասփիւռ ազգս Հայոց, իր քրիստոնէական ինքնութեամբ, իր Հաւատաւոր, ստեղծող ու առաջդիմութեան ձգտող Հոգեւոր ներաշխարհով: 16 դար ինչ որ ստեղծել է մեր ժողովուրդը, այնտեղ ներկայ են Հայերէնի առաջին ուսուցիչները՝ Սուրբ ՍաՀակ ու Սուրբ Մաշտոց մեր մեծ ու երանելի Վարդապետները, ու քանի դեռ անմար է նրանց լուսեղէն յիշատակը եւ Հայ գրերի ոգեղէն խորհուրդը, պիտի ապրեն ու գործեն՝ աստուածային խաւարացի լոյսի ու անհուն գանձերի բաշխումով շարունակելով կրթել միտք անյաղթ եւ Հոգի ազատ ու Հաւատարիմ:

Սիրելի ժողովուրդ Հայոց, սրտիդ սերմնած պահպանիր Մաշտոցեան գիրը մեր Հարազատ, եւ միշտ նուիրական պիտի մնան մեր Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին: Սիրի մեր մայրենին, ու պիտի գովերգուեն փառքեր նախնեաց, շնորհը ծաղկի, տեսիլը ազնիւ ու մաքուր եւ ձգտումը վսեմ՝ Հայրենեաց կեանքում: Լուսաւոր ու պայծառ պահիր Հայոց դպրոցը, եւ մեր զաւակների Հետ յաւերժի մասին պիտի գրուեցն Ազատն Արարատ, Մայր Արաքս ու Մայր Տաճար, որ ընդմիշտ յիշում են այն երջանիկ օրերի ինդուլթիւնը, երբ պատուական մեր ուսուցիչները Հայերէն Հնչող Աստուծոյ խօսքով երանելի, ցանկալի ու սքանչելի դարձրեցին Հայոց աշխարհը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յորդոր ենք կարդում մեր նուիրապետական Աթոռներին, թեմակալ առաջնորդներին, ուխտապահ Հոգեւոր դասին եւ Համայն Հաւատաւոր մեր ժողովրդին՝ Հայաստանում եւ Սփիւռքի մեր գաղթօջախներում 2005 թուականին Համագրային Հանդիսութեամբ ու շուքով տօնել Հայ Գրերի աստուածօրհնեալ Գիւտի սքանծալի յիշատակները: Աշխարհի չորս ծագերում թող մեր ինդուլթիւն Հոգու աղօթքը բարձրանայ երկինք, քանզի «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ» պարգեւելով անձինք պատկաւոր, «որք զարդարեցին սնօրինաբար զիմաստս անեղին, Հաստատելով յերկրի զգիր կենդանի»:

Թող Աստուծոյ խաղաղ ու արդար Հայեացքը շողարձակի Հայոց կեանքին՝ ազատ ու վերածնունդ մեր Հայրենիքում եւ Հայ Սփիւռքի բոլոր կողմերում:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթք ենք բարձրացնում երկինք՝ Հայցով, որ Աստուած, բարեխօսութեամբ լուսաբնակ մեր թարգմանիչ վարդապետների, շնորհ եւ առաւել շնորհ բաշխի Հաւատաւոր մեր ժողովրդին, որպէսզի յարատեւ լինեն սերը եւ նուիրումը առ Հայրենին ու մեր Սուրբ Եկեղեցին, եւ աներեք՝ մեր Հաւատը, որ «Տէրը բարութիւն պիտի գործի, իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի տայ» (Աղմ. 2Դ:13):

«Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Աստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ Ձեզ»: ԱՄԷն:

ԳԱՐԵԳՈՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 29-ն Յունուարի յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ
Ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի ընդ Համարաւ 283



**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՕՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆ
ՏՈՔԹ. ՌՈՒԲԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 14-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Հ. Հայաստանը իր անկախության հռչակման 15-ամեակին շնորհիվ է: Պատմության այս շար կարճ ժամանակաշրջանին մեջ արդեօ՞ք հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով կրցաւ ընկալել «Անկախութիւն» բառին իմաստը ոչ բառացիօրէն այլ որպէս շօշափելի սպրեկաձեւ ու ընթերցանալ անոր հրամայականներուն:



արդէն նշեցի, պէտք է հաշուի առնենք այն հանամանքը, որ Հայաստանը անկախութիւն ձեռք բերեց չափազանց ծանր տնտեսական եւ արտաքին քաղաքական պայմաններում: Այս է նաեւ այն հիմնական պատճառը, որ չնայած վերջին տարիների ընթացքում արձանա րուած ՀՀ տնտեսութեան երկամիշ թուերով աճին ու հսկայական դրական փոփոխութիւններին, Հայաստանի քաղաքացիներից շատերը դեռեւս շօշափելի միութեան բարելաւում չեն գ ում իրենց վրայ: Սակայն, հետեւողական եւ համակար ուած աշխատանքի շնորհիւ, վստահ եմ, Հայաստանն ունի բոլոր հնարաւորութիւններն ու նախադրեալները տարածաշրջանում ամենազար ացած երկիրը դառնալու համար:

Պ. 1988թ. աւերիչ երկրաշարժի հետեւանքները դեռեւս չվերացրած եւ Ատրպէյճանի կողմից պարտադրուած պատերազմի պայմաններում 1991թ. Սեպտեմբերի 21-ին ծնուեց Հայաստանի երրորդ հանրապետութիւնը: Հիմաւորց մեր ժողովրդի համար, ի հարկէ, 14-ամեայ անկախութեան ժամանակահատուածը մի ակնթարթ է թուում, սակայն այն չափազանց մեծ ու բախտորոշ նշանակութիւն ունի հայ ժողովրդի յետա այ կենսա ործունէութեան ու զար ացման համար: Այս 14 տարիները յատկանշուեցին մեր պետականութեան հիմքերի ամրապնդմամբ, քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների նախաձեռնութեամբ ու պատմական մի շարք ձեռքբերումներով: Եղան նաեւ սխալներ եւ բացթողումներ, որոնք, սակայն, պէտք չէ կապել անկախութեան հետ: Այսօր էլ կան մարդիկ, որոնք փորձում են ստուեր ցել անկախութեան աղափարի վրայ՝ շատ դէպքերում նորանկախ Հայաստանի անյաջողութիւնները կապելով մեր անկախ ոյութեան հետ: Ես ուղղակի ցաւ եմ ապրում երբ լսում եմ նման խօսակցութիւններ: Այո, ի հարկէ, այսօր էլ դեռ շատ անելիքներ կան մեր պետութեան մեջ, դեռ երկար ու ծիծանապարհ է մեզ սպասում, որպէսզի Հայաստանում ընդմիշտ վերանայ աղքատութիւնը, մեր մեծահասակները վայելէն արժանապատիւ ծերութիւն ու սոցիալապէս ապահովուած լինեն, որպէսզի հայ ուսուցիչներն ու փոնականները դասուեն մեր պետութեան ամենայար ուած ու բարձր վարձատրուող խաւին, մանուկներն ու երիտասարդները ստանան որակեալ եւ աշխարհում մրցունակ ազ ալին կրթութիւն: Սակայն, ինչպէս

Հ. Ե՞րբ երկիր մը անկախ է եւ ե՞րբ ինքնիշխան: Գոյութիւն ունի՞ն ինքնիշխան երկիրներ, թէ ամէն երկիր չեւով մը կախեալ է ուրիշներէ:

Պ. Անկախութիւն եւ ինքնիշխան պետութիւն հասկացութիւնները տարբերում են միմիանցից: Ազ ի համար անկախութիւնը նշանակում է օտարի լծից ազատա րուած հայրենիք ու ժողովուրդ եւ անկախ քաղաքականութիւն վարելու հնարաւորութիւն: Անկախութիւնը անմիջապէս տանում է ինքնիշխան պետութեան: Անկախութիւնը չի կարող լինել յարաբերական, այն բացարձակ արժէք է, որովհետեւ արտայայտում է ազ ի երիշխանութիւնը: Անկախութիւն ձեռքբերած ազ ը ինքն է որոշում, թէ որն է իր ազ ալին շահը եւ թէ ինչ քաղաքականութիւն են թելադրում առարկայական պայմանները: Ինչ վերաբերում է ինքնիշխանութեանը՝ ապա, ի տարբերութիւն անկախութեանը, այն յարաբերական է, քանզի այսօրուայ լոբաւացուած աշխարհում շատ ու շատ երկրներ ստիպուած են որոշակիօրէն յարմարուել մեծ տէրութիւնների, հարեւան կամ էլ քաղաքական եւ տնտեսական տարբեր միաւորումների մեջ տնուող դաշնակից երկրների տնտեսական ու արտաքին քաղաքական ուղե ծի հետ: Այսինքն, ոյութիւն



չունեն բացարձակ ինքնիշխան երկրներ: Աճած հզոր երկրները՝ վախենալով կորցնել իրենց ինքնիշխանությունը, վերապահումով են մտնում ինտերբացիոն տարբեր որոնման գծերին (ԵՄ որոշ երկրներ): Աւելի թոյլ երկրների համար վտանգը կայանում է նրանում, որ տեղի տալով իրենցից աւելի հզոր երկրների ընկերային ու տնտեսական ճնշումներին նրանք կարող են ընկրկել ինքնիշխանութեան դիրքերից: Յաղթահարելու համար այլ ազգերի կողմից պարտադրուած ռազմավարութիւնները՝ ազդ տեր պիտի կանգնի ազատութեան եւ երիշխանութեան արժէքներին, ինչը պայմանաւորում է ազգի ներքին միութեամբ: Միասնականութիւնը նշանակում է ազգի բոլոր անդամների անհատական եւ հատուածական շահերի ստորադասումը ազգի ռազմավարութեանը, որը հենքն է ազգային պետութեան:

Հ. Որո՞նք են այն կարեւոր ձեռքբերումները որոնք ունեցանք անկախութեան վերջին տարիներուն տնտեսութեան, ներքաղաքական եւ արտաքին քաղաքականութեան ոլորտներէն ներս:

Պ. Ես արդէն նշեցի, որ անկախութեան այս 14 տարիների ընթացքում յիրաւի պատմական ձեռքբերումներ ունեցանք: Առաջին հերթին, դա Արցախեան հերոսամարտում մեր ժողովրդի տարած փայլուն յաղթանակն էր, մեր պատուի ու սեփական ուժերի նկատմամբ հաւատի վերականգնման յաղթանակն էր, հայ զինուորի անսասան կամքի ու հայրենիքի նկատմամբ ունեցած անսպառ սիրոյ յաղթանակն էր: Դժուար է երանահատել հայ ժողովրդի նորաոյն պատմութեան մեջ Արցախեան հերոսամարտի նշանակութիւնը: Ինչ վերաբերում է վերջին տարիների յաջողութիւններին, պէտք է սկսեմ տնտեսական առկայ առաջընթացի արձանադրումից: 2003թ. Հայաստանը դարձաւ Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութեան անդամ: Հայաստանը տնտեսական զարացման տեմպերով անժխտելիօրէն երազանցում է իր բոլոր հարեւաններին: 2004թ. մեր երկիրը իր տնտեսութեան ազատականութեան (Economy freedom) բարձր մակարդակով 44-րդ տեղը յաւեց Ֆրանսիայի հետ միասին: Երեւան այցելող զբօսաշրջիկների շեշտակի աւելացումը ինքնին խօսում է նրա մասին, որ Հայաստանը դառնում է աւելի յաւիչ ու աւելի ապահով: Պէտք է հաշուի առնել նաեւ այն, որ տնտեսութեան զարացումը իրականացում է տրանսպորտային շրջափակման պայմաններում:

Արտաքին քաղաքական ոլորտում Հայաստանը՝ որդեգրելով փոխլրացման սկզբունքը եւ հաշուի առնելով տարածաշրջանում մեծ տիրութիւնների ունեցած հիմնականում տարբեր աշխարհաքաղաքական շահերը, կտրականապէս մերժեց բաժանարար ծերի ստեղծումը խթանող եւ Կովկասը հակադրման դաշտ դարձնելու փորձերը: Այդ իսկ պատճառով վերջին տարիների ընթացքում մեզ յաջողուեց հաւասարապէս փոխշահաւէտ յարաբերութիւններ գործացնել թէ մեր անմիջական հարեւանների, եւ թէ խոշոր տիրութիւնների հետ: Հայաստանի անդամակցութիւնը Եւրոպայի Խորհրդին վերջնականապէս ամրապնդեց մեր արտաքին քաղաքականութեան մեջ եւրոպական ուղղութեանը որպէս երակայ:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարաւորման որոնման շրջանում Հայաստանի կառուցողական եւ յստակ քաղաքականութիւնը ստիպեց թէ Ատրպէյճանին եւ թէ Միմսկի խմբի համանախաահող պետութիւնների ղեկավարներին հաշուի մատել ԼՂ-ի փաստացի անկախ կարավիճակի հետ եւ իրատեսական լուծումներ առաջադրել: Ակտիւ արտաքին քաղաքականութեան շնորհիւ մեզ յաջողուել է խափանել ՄԱԿ-ում եւ միջազգային այլ կազմակերպութիւններում Ատրպէյճանի կողմից տարբեր նախաձեռնութիւններն ու առաջարկութիւնները: Միջազգային հանրութիւնը ժամանակի ընթացքում կարծում են մոյմպէս կը հակուի այն կարծիքին, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտութեան կարաւորման վերջնական արդիւնքում չի կարող ձեռք բերել աւելի պակաս քաղաքական կարավիճակ քան ունի այսօր:

Ինչ վերաբերում է ներքին քաղաքական ձեռքբերումներին ապա կը ցանկանայի նշել, որ այս տարիների ընթացքում դրուեցին ժողովրդավարութեան զարացման հիմքերը, որոնք շրջադարձային նշանակութիւն կարող են ունենալ մեր երկրի ապաայ զարացման համար: Վստահ են, Հայաստանում ժողովրդավարական որոնման գծերը այլեւս անշրջելի բնոյթ են ստացել:

Հ. Ի՞նչ ծրարիրներ կը մշակէ Հայաստանի պետութիւնը որպէսզի երկրին մէջ կարելի ըլլայ յաղթահարել աղքատութիւնը եւ ամրապնդել օրինականութիւնը:

Պ. Աղքատութիւնը Հայաստանում հանդիսանում է մեր պետութեան ամենալուրջ ու ցաւոտ խնդիրներից մէկը: Այս ուղղութեամբ ՀՀ կառավարութիւնը մշակել է 2003թ. Օոստոսի 8-ին ընդունել է Աղքատութեան Յաղթահարման Ռազ-



մավարական Ծրափորը, որով նախատեսվում է տասնամեայ ժամանակաշրջանում 2005 – 2015 թթ. կրճատել աղքատ ազաբնակչության տոկոսը տասնամյակում 41–ից մինչև 4.1 տոկոս: Իմ խորին համոզմամբ աղքատության յաղթահարումը Հայաստանում պետք է դառնայ համազային խնդիր: Հայաստանում մենք չպետք է ունենանք աղքատ մարդ: Աղքատության հետեւանքները չափազանց ծանր են պետության եւ հասարակության համար:

Հ. Որո՞նք են Սահմանադրության փոփոխություններու նախափոփն «անվիճելի բարեփոխումները»:

Պ. Ցանկանում եմ շեշտել, որ Հայաստանում Սահմանադրական բարեփոխումները իրականացվում են ոչ թե այն պատճառով, որ որժող Սահմանադրությունը շատ վատն է եւ անհրաժեշտ էր այն շուտափոյթ փոխել, այլ այն պարզ պատճառով, որ Հայաստանը Եւրոպայի խորհրդի անդամ դառնալով իր վրայ էր վերցրել մի շարք պարտաւորութիւններ եւ այդ թւում նաեւ սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու: Ի դէպ սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ հանրաքուէն տեղի կ'ունենայ ս.թ Նոյեմբերի 27–ին: Այն կենսական նշանակութիւն կ'ունենայ Հայաստանի յետաւայ զարաւցման համար: Բարեփոխումները հիմնականում միտուած են էլ աւելի «եւրոպականացնելու» որժող սահմանադրութիւնը՝ ամրապնդելու դատական համակարի անկախութիւնը, հաւասարակշռելու որժադիր եւ օրէնսդիր իշխանութեան թելերը, խթանելու ժողովրդավարութիւնն ու մամուլի ազատութիւնը:

Հ. Ի՞նչ ոլորտներ կը ներաւեն Հայաստան Եփպտոս յարաբերութիւնները:

Ո՞ր մարզերուն մէջ համաորժակցութիւնը առկայ է եւ արդեօ՞ք նոր ծրափրներ կան իրականանալիք մօր սպաալին:

Պ. Եփպտոսը հանդիսանում է արաբական աշխարհի քաղաքական «ժանրաքաշայինը» ու տարածաշրջանի առաջատար պետութիւններից մէկը: Եփպտոսի հետ քաղաքական համաորժակցութեան սերտացումը բխում է ՀՀ արտաքին քաղաքական շահերից՝ թէ արաբական եւ թէ մահմետական մնացած աշխարհի հետ ՀՀ արդիւնաւէտ քաղաքականութեան իրականացման տեսանկիւնից: Ներկայիս երկրողմ քաղաքական յարաբերութիւնները Եփպտոսի հետ կարելի է որակել «երազանց»: Երկու երկրների արդիւնաւէտ եւ

փոխաշահաւէտ սերտ համաորժակցութիւնը միջազալին կազմակերպութիւններուն կարող է հանդիսանալ վերոյիշեալ որակումի ապացոյցներից մէկը: Այս տարի տեղի ունեցաւ Վ. Օսկանեանի այցը Եփպտոս, որի ընթացքում Համաորժակցութեան յուշափր ստորաիւնեց Արաբական Լիկայի լիաւոր քարտուղար Ամր Սուսայի հետ: Եփպտոսի եւ Հայաստանի արտորժնախարարները վերջին մէկ տարուայ ընթացքում 3 հանդիպում են ունեցել: Սա ինքնին խօսում է Հայաստան–Եփպտոս քաղաքական երկխօսութեան բարձր մակարդակի մասին: Մինչեւ տարեվերջ նախատեսուում է Ա Պ նախարարի տեղակալի այցը Եփպտոս՝ քաղաքական խորհրդատուութիւններ անցկացնելու նպատակով: Եփպտոսի վարչապետ Ա.Նազիֆի հրաւերով մօտ ապաալում առաջին անամ Եփպտոս կ'այցելի ՀՀ վարչապետ Ա. Սարարեանը: Այցի ընթացքում նախատեսում ենք իրականացնել միջկառավարական յանձնաժողովի նիստ, ինչպէս նաեւ Գորժարար համաժողով, որին կը մասնակցեն մեծ թուով հալորժարարներ: Մէկ ամիս առաջ Երեւան մեկնեց Եփպտական խոշոր դեղաորժական ընկերութեան նախաաիր՝ Հայաստանում ինսուլինի եւ վակցինների համատեղ ձեռնարկութեան հիմնման շուրջ բանակցութիւններ վարելու նպատակով: Դեսպանութիւնը նաեւ ակտիւ աշխատանքներ է տանում Երեւան–Գահիրէ երրորդ երկրի միջոցով օդային կապն ապահուելու ուղղութեամբ: Այդ կապակցութեամբ նախատեսուում է «Արմաւիա» ընկերութեան պատուիրակութեան այցը Գահիրէ: Ս.թ. Նոյեմբերի վերջին Հայաստանի 7–8 զբօսաշրջիկային ընկերութիւնների ներկայացուցիչներ կ'այցելեն Եփպտոս տեղում համաորժակցութեան հեռանկարները քննարկելու նպատակով: Գիտութեան ոլորտում կը ցանկանայի նշել յատկապէս ս.թ. Յուլիսին Երեւանի Պետական Համալսարանի եւ Գահիրէի Համալսարանի միջեւ ստորաիւնած համաժայնափրը, որով նախատեսուում է հայոց լեզուի եւ յրականութեան ամպիոնի հիմնումը Գահիրէի համալսարանում: Կարժում են, սա պատմական իրադարժութիւն է, քանի որ առաջին անամ արաբական եւ ընդհանրապէս մահմետական երկրի կենտրոնական բուհում ամրաիւնում է հայոց լեզուի ուսուցումը: Մէկ շաբաթ առաջ Երեւանի Պետական Համալսարան մեկնեց արաբերէն լեզուի եւ յրականութեան դասախօս արեւելափտութեան ֆակուլտետում դասաւանդելու նպատակով: Առաջին անամ սպասուում է նաեւ երկու Եփպտացիների որժուղում Երեւանի Բժշկական Համալսարան ուսանելու եւ դրկտորական թէզ պաշտպանելու նպատակով: Մշակոյթի բնաավառում դեսպանութիւնը նախաձեռնել է 2006թ. փետրուարին



մեծ միջոցառում Աղեքսանդրիայի թաղարանում նուիրուած հայ թերի ստեղծման 1600–ամեակին՝ Մատենադարանի հին ձեռագրերի ցուցահանդէս եւ իտական կոնֆերանս «Հայ իտականները եւ Աղեքսանդրիայի թաղարանը» թեմայով:

Հ. Ի՞նչ ներդրումներ կատարած է Եփսոսահայ աղուքը վերջին շրջանին իր հայրենիքին բարձրաճանաչ համար:

Պ. Եփսոսահայ աղուքը հայկական ամենադասական օրինակելի աղուքներից է իր ազատին, մշակութային, բարեսիրական, մարզական, կուսակցական եւ եկեղեցական կառոյցներով: Հայաստանի անկախութեան առաջին իսկ օրումնից Եփսոսահայութիւնը իր շօշափելի բարոյական եւ նիւթական ներդրումն է ունեցել Եփսոսում ՀՀ դեսպանութեան կայացման եւ մինչեւ օրս էլ շարունակում է ունենալ վերջինիս կենսադրժուներութեան մէջ: Օտուելով այս պատեհ առիթից ես կը ցանկանայի իմ նահատանքի եւ երախտիքի խօսքը ուղղել այն Եփսոսահայերին, որոնց անկեղծ բարեկամութիւնը, քաջալերանքն ու աջակցութիւնը այս տարիների ընթացքում վայելում է դեսպանութիւնը: Առանց Ազային իշխանութիւնների ու Եփսոսահայ մեր բարեկամների օժանդակութեան դժուար թէ դեսպանութիւնը կարողանար լիարժէքօրէն կատարել իրեն վերապահուած դրժառոյթները: Պէտք է նաեւ նշեմ, որ Եփսոսահայութիւնը իր գալի օժանդակութիւնն է ցուցաբերում Հայրենիքին՝ տարբեր բարեսիրական ծրարերի ու նախաձեռնութիւնների տեսքով: Այսպէս, 2005թ. Օոստոսին Եփսոսահայերի հանանակութիւնների շնորհիւ վերանորոուեց եւ արդիական բուժարքաւորումներով զինուեց Երեւանի Մարի Նուպարի անուան մանկական ակնարուժական հիւանդանոցը: Սա մեծ ծրար իր էր (շուրջ 140.000 ամ. տղարի) եթէ հաշուի առնենք Եփսոսահայութեան թուաքանակն ու հնարաւորութիւնները, համեմատած ԱՄՆ–ի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի այլ հայկական աղուքների հետ: Համայնքը նաեւ իր ակտիւ մասնակցութիւնն է ունենում Հայաստանում կազմակերպուող համահայկական տարբեր միջոցառումներին, օժանդակում է հայաստանեան իտական եւ մշակութային տարբեր հաստատութիւններին:

Հ. Երկքաղաքացիութիւն ունենալու համար ի՞նչ պայմաններ պէտք է լրացնէ սփիւռ

քահայր եւ որո՞նք են իր պարպաւորութիւնները եւ ակնկալիքները:

Պ. Հայաստանի անկախացումից ի վեր երկքաղաքացիութեան հարցը շարունակում է յուզել սփիւռքում բնակուող մեր հայրենակիցներին: Սա չափազանց կարեւոր եւ միեւնոյն ժամանակ բարդ խնդիր է հաշուի առնելով այն հանանանքը, որ հայ ժողովրդի մի հոծ զանուած բնակուում է Հայաստանի Հանրապետութեան սահմաններից դուրս: ՀՀ քաղաքացիութիւն ունենալու սփիւռքահայերի ցանկութիւնը հասկանալի է եւ ողջունելի: Կը ցանկանայի նշել, որ թէեւ ՀՀ դրժող Սահմանադրութեամբ ամրադուած չէ երկքաղաքացիութեան իրաւունքը, այնուամենայնիւ 1994թ. ընդունուած օտարերկրեայ քաղաքացիների իրաւական կարավիճակին վերաբերող օրէնքում նախատեսուած է ՀՀ կացութեան յատուկ կարավիճակ շնորհել ազուութեամբ բոլոր հայերին, անկախ նրանց բնակութեան վայրից: Սա միջազային պրակտիկայում բացառիկ երեւոյթ է, երբ օտարերկրեայ քաղաքացուն տրուում են անձնադիր եւ քաղաքացու բոլոր իրաւունքները (բացառութեամբ զինուորական ծառայութեան եւ ընտրութեան) միայն ազուութեան պատկանելութեան սկզբունքի հիման վրայ: Կարժում են մենք համապատասխան ճիշտ քարոզչութիւն չկազմակերպեցինք, որպէսզի սփիւռքահայութեանը բացատրուէր այդ օրէնքի էութիւնն ու նշանակութիւնը, ինչպէս նաեւ այն, որ անան եթէ երկքաղաքացիութեան իրաւունքը հաստատուի, միեւնոյնն է ՀՀ–ում ընտրութիւններին մասնակցելու եւ զինծառայութեան հետ կապուած հարցերը պէտք է կարաւորուէն իրաւական այլ փաստաթղթերով: Այսօր ՀՀ կացութեան յատուկ կարավիճակ ստացած սփիւռքահայերը իրենց ՀՀ անձնադրերով ազատօրէն ճամբորդում են Հայաստան, սեփականութիւն նում, կրթութիւն ստանում, մի խօսքով օտուում ՀՀ քաղաքացիների համար նախատեսուած բոլոր իրաւունքներից: Ուրախութեամբ պէտք է նշեմ, որ շուրջ 200 Եփսոսահայեր արդէն ստացել են ՀՀ կացութեան յատուկ կարավիճակ:

Շնորհակալութիւն Ձեզի եւ ջերմ մաղթանքներ յառաջիկայ ծրարներու անխափան ու արաիրականացումին համար:

Արաքսի Տօվլէթեան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ՆՇՈՒՄԸ ԳԱՇԻՐԷԻ ՄԷՋ

«Չայրենիքի գաղափարն է, որ մեր ազգի բոլոր անհատները եւ բազմատեսակ տոհմերը միացուցած է՝ դարձնելով զանոնք մէկ ժողովուրդ, բազմանդամ մէկ ընտանիք, որոնց երակներուն մէջ միեւնոյն արիւնը կը հոսի, որոնց շրթերուն վրայ միեւնոյն բարբառը կը հնչէ եւ որոնց ո՛չ կարիքը եւ ո՛չ ալ վտանգը կրնայ բաժնել»:

Վերոնշեալ խօսքերով է որ 20-րդ դարուն ամենածանր ժամանակներու մէջ ապրած ու գործած մեր հայրապետներէն մին կը բնորոշէր հայրենիքի գաղափարը: («Նոր Օր» 17-9-2005)

Չայրենի ժամանակակից գրող Պերճ Չէյթունցեան կը գրէ, «անկախութիւնը բացարձակ արժէք է, քննարկման ո՛չ ենթակայ, մանաւանդ՝ անսակարկելի. անկախութիւնը մեծագոյն երջանկութիւն է մարդու եւ ազգի համար, ան համազգային երջանկութիւն է»:

Չայրենիք ունենալու եւ անոր անկախութեան մեծագոյն երջանկութեան արժանանալու 14-ամեակին առթիւ, ինչպէս Չայաստանեայց բոլոր եկեղեցիներուն, Նոյնպէս եւ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ Կիրակի 18 Սեպտեմբերին, Սուրբ եւ Անմահ Պատարագի ակարտին կատարուեցաւ հանրապետական մաղթանք: Պատարագեց Գահիրէի հոգեւոր հովիւ Տ. Չենոն Քհնյ. Բարսեղեան:

Եգիպտոսի Չայոց Թեմի ընտրեալ Առաջնորդ Տ. Աշոտ Վարդապետ Մնացականեան իր արտասանած կուռ քարոզին մէջ անդրադարձաւ նախ Խաչվերացի Խորհուրդին, ապա հայրենիքի անկախութեան, նշելով նաեւ, թէ մենք այս տարի կը տօնենք Չայրեն Գիրերու Գիւտին 1600-ամեակը, որուն ստեղծումով անկախացաւ մեր լեզուն ու մշակոյթը: Չայր Սուրբը պատգամեց որդիաբար սիրել, պահել եւ պաշտպանել մեր հայրենիքը եւ մեր լեզուն:

Եկեղեցական արարողութեան ակարտին Առաջնորդարանի դահլիճին մէջ ՀՀ Անկախութեան առթիւ շնորհաւորութիւններ ընդունեցին Չայր Սուրբը, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեանը, Դեսպանատան ներկայացուցիչները, Գահիրէի Պատկ. Թեմական եւ Զաղաքական Ժողովներու ատենապետներ տեարք Անդրանիկ Մեսրոպեանը եւ Պերճ Թերզեանը:

Խօսք առնելով, տիար Թերզեան նշելէ ետք, թէ հաւաքուած ենք այսօր ՀՀ Անկախացման 14-ամեակը յիշատակելու, հրաւիրեց մեր պետութեան ներկայացուցիչ պր. Դեսպանը, ելոյթ ունենալու:

Դեսպան տոքթ. Կարապետեան խօսքը ուղեւոր մասնաւորաբար ներկայ Ազգային Վարժարաններու աշակերտութեան ըսաւ, թէ մեր հայրենիքին անկա-

խութիւնը ձեզի հասակակից է: Մօտաւորապէս 6 դար կորսնցնելէ ետք մեր պետականութիւնը, այսօր կը տօնենք 14-ամեայ մեր Անկախութիւնը որ գանձ մըն է մեզի համար եւ մենք ձեզի հետ միասնաբար պիտի գործենք հաստատ հիմքերու վրայ դնելու մեր անկախ պետականութիւնը:

Տոքթ. Ռ. Կարապետեանի ելոյթէն ետք, տիար Թերզեան եւս խօսքը ուղեւորով աշակերտութեան ըսաւ, իբրեւ մարդ եւ հայ, կ'ապրինք Չայաստանէն դուրս: Օգտակար ըլլալու համար մեր հայրենիքին, պէտք է պահենք մեր հայ լեզուն ու կապուած մասնք մեր եկեղեցիին: Ապա շեշտեց, ամէն ճիգ ըրէք պահելու հայերէնը, սորվեցէք շատ լեզուներ բայց եւս հայերէնը, հայու պէս ապրեցէք եւ եղէք հպարտ:

* * *

Եգիպտոսի մօտ Չայաստանի Հանրապետութեան Դեսպանութիւնը Չորեքշաբթի, 21 Սեպտեմբեր 2005-ին երեկոյեան ժամը 7.00-10.00 կազմակերպած էր ընդունելութիւն մը նշելու ՀՀ անկախացման 14-րդ տարեդարձը:

Դեսպանատան մուտքին պր. Դեսպանն ու ազնուափայլ տիկինը, դեսպանութեան քարտուղարներ տեարք եւ տիկնայք Տիգրան Գեորգեան եւ Միեր Մկրտումեան ընդունեցին շնորհաւորանքները ներկայ եգիպտացի բաժրաստիճան պաշտօնատարներու, Եգիպտոսի մէջ գործող օտար դիւանագետներու, եգիպտահայ գաղութի զանազան կառոյցներու ներկայացուցիչներուն եւ այլ հրաւիրեալներու:

Չայկական երգի եւ երաժշտութեան հնչիւններուն ներքեւ ներկաները դիտեցին այս առթիւ դեսպանատան պարտեզին մէջ ցուցադրուած «Եգիպտոսը Չայաստանցի Մանուկներուն Աչքերով» նկարներու շարքը:

Ճոխ էր եւ անթերի դեսպանութեան հիւրասիրութիւնը: Ձերմ էր եւ ուրախ մթնոլորտը:

Թող հայրենիքի գաղափարը եւ անկախութեան երջանկութիւնը թեւածէ հոն՝ ուր Նոյնիսկ մէկ հայ գոյութիւն ունի եւ մղէ զայն աւելի եւս հայանալու:

Արաքսի Տեօվլէթեան



ՈՂԲ. ՅԱԿՈԲ ՎԱՄԲԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրիչս ձեռք առի տուն տալու տարիներու ընթացքին սրտիս մէջ կուտակուած յարգանքի ու գնահատանքի այն զգացումներուն, որոնք փակուած էին հոն, վախճալով որ եթէ բառերու վերածուի՛ն, պիտի կորսընցնեն իրենց անկեղծութիւնը եւ վիրաւորեն համեստութիւնը այն անձին, որուն պէտք էր ուղղուէին: Սակայն ապարդիւն:



Ամիս մը անց, դարձեալ ձեռք կ'առնեմ գրիչս փորձելու գրել գուցէ ոչ այն՝ ինչ պիտի ուզէի յանձնել թողութիւն ու վստահ ըլլալով որ խօսքերը այլեւս չեն կրնար վիրաւորել զինք:

Սակայն, այս անգամ աչքիս առջեւ կը պարզուի սովորական անձերու ուղուած գովաբանական անտեղի ու առատ ածականներու գործածութենէն իր դէմքին վրայ յառաջացած ծամածուութիւնն ու ձեռքին դէպի վեր, ետ՝ ու վար շարժումը, որ ակամայ կը կեցնէ գրիչիս շարժումը եւ մտածումներս ու զգացումներս կ'երթան փակուելու իրենց տեղը:

Դժուար է գրել անձի մը մասին որ հարազատ է քեզի ու ըլլալ անաչառ, մանաւանդ երբ այդ գրութիւնը կը թելադրուի սրտէն:

Երեքշաբթի, Օգոստոս 23-ին դադրեցաւ բաբախելէ սիրտը Յակոբ Յամբիկեանի:

Կանգ առաւ իր ազգին հոգեբով տառապող եւ ուրախութիւններով թռթռացող հայու հոգին:

Հայու «խենդ» ու «ծուռ», սակաւ գտանելի հոգին, անկաշկանդ, յախուռն ու խիզախ, միեւնոյն ատեն համեստ ու բարի:

«Չինք կարելի է ներկայացնել յանձնառու հայու կերպարով» արդարացիօրէն ըսած է ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանային Յանձնաժողովի ատենապետ տի-

ար Պերճ Թերզեան, հանգուցեալին յուղարկաւորութեան արտասանած իր դամբանականին մէջ, անդրադառնալով անոր ունեցած ազգային հասարակական ընդարձակ գործունէութեան այն բոլոր կազմակերպութիւններէն ներս, որոնց մաս կը կազմէր ոչ որպէս լոկ ներկայութիւն, այլ՝ գործն անհատականութիւն մը: Եկեղեցիէն ներս, եկեղեցիին օրէնքներուն գիտակ ու անոնց բծախնդիր կիրառման հետապնդողն էր ողբացեալը, պատգամող բանախօսը մեր բեմերուն եւ ներշնչող ու խանդավառող դասախօսը:

Կը յիշեմ իր սպիտակահեր ներկայութիւնը ընդհանրապէս գաղութիս բոլոր հանդիսութիւններուն: Երբ հանդիսութեան ընթացքին, խօսքի մը, երգի մը կամ արտասանութեան մը աւարտին մօտ, հանդիսասրահին մէջտեղէն (ան բնաւ առջեւ կամ ետեւ չէր նստեր) կը լսուէր ողբացեալին բարձրաձայն «պառաւ»-ն եւ ուժգին ծափահարութիւնը, զնահատելու այն ամէն փոքր ու մեծ ճիգը, լաւ կամ սկար ելոյթը, որ կապ ուներ ազգայինին հետ, առընչուած էր հայերէնին, հայրենիքին ու Ս. Էջմիածինին:

Հաւատքը Աստուծոյ հանդէպ ու հաւատքը հայրենիքի գոյատեւման ու բարգաւաճման նկատմամբ, եղան այն երկու փարոսները, որոնք լուսաւորեցին ողբացեալ Յամբիկեանի հոգեւոր կեանքի ճանապարհը, իսկ Անահիտն ու երկու դուստրերը իմաստաւորեցին զայն:

Թող հանգիստ ննջէ իր հայու յոգնած հոգին, որովհետեւ իր ճանապարհը պիտի շարունակեն Նոյն այդ լոյսին շողերով լուսաւորուած ու դաստիարակուած իր սաները:

Արաքսի Տօվլէթեան

Յակոբ Յամբիկեան ծնած է Չակազիկի մէջ, Եգիպտոս՝ 1922-ին: Տեղւոյն վրայ ստանալէ ետք իր նախնական ուսումը, մեկնած է Երուսաղէմ եւ հետեւած Սրբոց Յակոբեանց վանքին ժառանգաւորաց վարժարանի դասընթացներուն:

1944-ին Գահիրէ վերադարձած է եւ պաշտօնի կոչուած ծխախոտի Իսթըրն ընկերութեան մօտ:

Ան տարիներ շարունակ ծառայած է եկեղեցիին եւ Ազգային Առաջնորդարանի ծիրէն ներս գործող ժողովներուն, յանձնախումբերուն եւ վարժարաններուն մէջ, որպէս անդամ Թեմական եւ Քաղաքական Ժողովներու, Ուսումնական Խորհուրդի, Եղիայեան Սանուց Յանձնախումբին, Եկեղեցւոյ եւ Ազգային Գալուստեան եւ Նուպարեան վարժարաններու հոգաբարձութիւններուն, ուր նաեւ դասաւանդած է հայերէն լեզու եւ պատմութիւն:

Հանգուցեալը մաս կազմելով Հայ Ազգային Հիմնադրամի Կեդրոնական Վարիչ Մարմին, Հայ Գեղարուեստաւորաց Միութեան, Կոկանեան Սրահին եւ Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակցութեան վարչական կազմերուն, իր հրապարակային ելոյթներով ու մամուլին տուած յօդուածներով տարած է բեղուն մշակութային գործունէութիւն:

Ողբ. Յակոբ Յամբիկեան եղած է ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամ եւ 1976-1981 արտօնատեր եւ խմբագիր Գահիրէի ԶԲԸՄիութեան «Տեղեկատու» պաշտօնաթերթին:



ՔԵԶՍՈՎ ՔԵԶԻ ՕՐՆՆՈՒԹԻՒՆ

Քեզանով է պայթել հունտը մեր գոյութան,
 Քեզանով եկք դարձել տուն ու երկիր,
 Շառաչել ես դու հին հողում Երարատեան,
 Մինչեւ հնչիւնը քո դարձել է գիր:

ՀԱՍՏ ՍԱՀԵԱՆ

Այս տարի՝ 2005 թուականին կը լրանայ Հայոց պատմութեան մեծագոյն հրաշքին՝ Մաշտոցեան գիրերու գիտին 1600-ամեակը: Միաժամանակ ան տօնն է Հայոց լեզուի «անկախութեան»՝ ամրագրուած իր եզակի նշանագրութեամբ, համայն աշխարհի այբուբեններու բազմութեան մէջ:

Թերեւս ոչ ամէն ինչ, բայց հայ եւ օտար բանասեր – պատմաբան – հայագետ գիտնականներու կողմէ շատ բան ըսուած է արդէն, մաշտոցեան հանճարի արգասիք Տեառնադրոշմ հայոց գիրերուն եւ այդ շնորհի կենսալի արդիւնաւորման մասին:

Հայ գրական-բանաստեղծական խօսքի վարպետներ զգացական խոհական ու փիլիսոփայական մակարդակներով նոյնպէս արժեւորած են հայոց լեզուի եւ մաշտոցեան գիրերու անժամանցելի նշանակութիւնը:

Հայոց գիրերու ծագումնաբանութիւնը ուսումնասիրող գիտական միտքը երբեմն վերլուծական գիտերով եւ երբեմն ալ պատմական անցեալի ժլատ տեղեկութիւններու ծանծաղուտին մէջ խարխափելով, յամենայն դէպս կուտակած է ուսումնասիրութիւններու նշանակալի պաշար մը, որ ի վերջոյ մեզի կը փոխանցէ հայոց տառերու հայաբուխութեան եւ ինքնատիպութեան աներկբայութիւնը:

Լեզուն մարդկային միտքը արտայայտելու միջոց է, իսկ գիրը՝ այդ միջոցը արձանագրողը:

Լեզու եւ գիր: Կրնայի՞ն անոնք գոյատեւել առանց մէկը միւսին: Քաղաքակրթութեան ստորին մակարդակներուն՝ թերեւս:

Գրագուրկ լեզուն, սակայն, մարդու շրթունքներուն վրայ այնպիսի արագութեամբ եւ բնականօրէն պիտի ձեւափոխուէր, իւրաքանչիւր յաջորդ սերունդ այնպիսի «անկաշկանդութեամբ» իր ճաշակը պիտի թելադրէր իր իսկ

խօսքին, որ պատմական համեմատաբար կարճ ժամանակներու տարբեր սերունդներ խորթացման եւ օտարումի անխուսափելի զգացումը պիտի դիմագրաւէին միմեանց հանդէպ, եթէ հրաշքով մը պապ եւ թոռան թոռ հանդիպելու ըլլային իրարու:

Եւ վերջ ի վերջոյ բաբելոնեան աշտարակաշինութեան պատմութիւնն այլաբանօրէն նաեւ այս երեւոյթին չափնարկեր արդեօք՝ խօսելով նոյն օրերու բաժնեկից, բայց լեզուական տեսակետէ բնականօրէն զարտուղուած ցեղերու սերունդներուն մասին:

Գիրերու շնորհիւ տարբեր ժողովուրդներու բերնին մէջ խօսակցական լեզուի բանաւոր-անցողական կեանքը այսպիսով ձեռք կը բերէր գրաւոր-մնայուն կենսակերպ:

Հայոց պարագային ահա, լեզուի կատարելապէս հայեցի գրաւոր-մնայուն կեանքի այդ պահը 1600 տարի առաջ էր՝ մեր թուագրութեան 405 թուականին:

Հայոց եւ Հայոց երկրի վերաբերեալ մեր ազգային նախնական յիշողութիւնը ինչ որ իմաստով սահմանափակ է: Եւ այն ամէնը կամ գրեթէ այն ամէնը զոր փրկուած է յաւիտենական մոռացումէ՝ շնորհիւ այդ նախնական ժամանակներէն դարեր եւ հազարամեակներ անց ստեղծուած եւ մեզի անանդուած մաշտոցեան գիրերուն, քանի որ ասոնցմով մեզի հասան ինչպէս յետմաշտոցեան ժամանակներու պատմութիւնը, նոյնպէս եւ նախամաշտոցեանը:

Ճիշտ է, հայն ու հայոց լեզուն կային նաեւ մինչեւ մաշտոցեան այբուբենը, բայց հայոց լեզուն կենդանի էր գերազանցապէս բանաւոր մակարդակով, մինչդէռ քաղաքակրթութեան ուղին բռնած ժողովուրդներուն համար այդքանը քիչ էր. քիչ է ըսել, թէ քիչ էր: Հզօր կայսրութիւններու եւ զարգացած գրաւոր մշակոյթ ունեցող քաղաքակրթութիւններու միջեւ գտնուող



հայոց համար այդ իրողութիւնը սպասել չտուող մահ էր:

Հաւանաբար քիչ չէին ազգային կացութեան այս անելէն ելք որոնողները, մինչդէռ Ս. Մեսրոպ Մաշտոց եղաւ միակը, որ տուաւ հայոց ազգային եւ քաղաքական կեանքի այս թնճուկի միակ քաղաքակրթական լուծումը՝ հայոց գիրերու գիւտը:

405 թուականի ներկային եւ 405-էն դէպի ապագայ ուղղուած անոր իմաստնագոյն հայեացքն էր, որ բերաւ գրոց գիւտին՝ ազգային, քաղաքական, հոգեւոր ու մշակութային այդ սխրագործութեան: Ազգային վերածննդեան այդ օրէն ասոյին մենք մեզի կը զգանք ոչ միայն պարզապէս հայեր (Հայկի յետնորդներ), այլ՝ հայ-մաշտոցեաններ: Որովհետեւ այնուհետեւ յաճախ, երբ կորսնցուցինք երկիր եւ պետականութիւն, երբ բաժնեցին մեզ օտարի սահմաններով մեր իսկ սահմաններուն մէջ, մինչեւ անգամ մեր լեզուի զարգացումը երկնհիւղուեցաւ մեր հայրենիքի երկատման նման, մինչդէռ մեր գիրերը եղան ու մնացին մեր միասնութեան անխորտակելի սահմանները:

Յամենայնդէպս այդպէս էր մինչեւ 1922 թուականը, երբ օրուան խորհրդային իշխանութիւններուն կայսերապաշտական ազգակուծորգին որպէս հերթական քայլ, մեր բառակազմութեան ուղղագրական մաշտոցեան սկզբունքներուն տրուեցան անխորհուրդ տրամաբանածէ: Եւ այսօր մեր անկախ պետականութեան առջեւ ծառացած կը մնայ պատմական ժամանակներու այդ խարդաւանքի դարմանումը նոյնպէս:

Եկեղեցին ու ժողովուրդը, երբ անձի մը սըրբութիւնը կ'ընկալէն եւ կը հռչակեն, նկատի կ'ունենան եւ կ'ընդունին անոր կեանքի մէկ կետէն սկսեալ մինչեւ վերջին շունչ ապրուած սրբութիւն մը եւ սրբացեալ գործունէութիւն մը ամբողջովին, առանց վերապահումներու:

Ս. Մեսրոպ Մաշտոց սրբացուեցաւ իր ժողովուրդին կողմէ եւ սրբացուեցաւ որպէս հայոց գիրերու գիւտարար, մինչդէռ անոր իսկ ստեղծած գիրերուն ուղղագրական սկզբունքներուն գլխիվայր շրջուելուն «խորհրդային» նախածեռնութիւնը նախ անարգանք է Մաշտոցի սըրբութեան եւ միաժամանակ խզումի նենգամիտ պարտադրանք մը՝ դրուած հայոց լեզուի զարգացման արմատներուն եւ սաղարթներուն միջեւ:

Ազնուական ծագումով, արքունի գիւտարար-

կան նախկին քարտուղար, ապա վարդապետ սուրբ Մեսրոպ Մաշտոց իր մէջ կ'ամփոփէ հեռատես քաղաքագետի, Զրիստոնէական վարդապետութեան նուիրեալ քարոզիչի եւ չգերազանցուած գործնական հայրենասերի բիրեղացումը:

Որպէս հայ գիրերու ստեղծող, Մեսրոպ Մաշտոց եղաւ նաեւ հիմնադիրը հայ թարգմանական գրականութեան, հայ գրչութեան ու հայ դպրութեան: Ան է մեր առաջին ուսուցչապետը, բանաստեղծը, խազագրութեան եւ «մասնագիտական» երաժշտութեան հիմնադիրը:

Հայոց գիրերով առաջին թարգմանութիւնը եղաւ Աստուածաշունչը, զոր ապագային օտարներէ պիտի կոչուէր «Թագուհի թարգմանութեանց»:

Թողունք թէ, Մաշտոցի իսկ կողմէ գիրերու այս առաջին գործածութեան մէջ հայոց լեզուի քերականական մշակութեան աստիճանն ու բառամբերքի ճոխութիւնը կը պարզէ մակարդակ մը (ինչպէս կը մատնանշէ վերոնշեալ գնահատականը), որ զարմանալի պիտի ըլլար միայն բերանացի գործածութիւն ունեցող լեզուի մը համար:

Թողունք հեթանոսական Հայաստանի օտար կամ փոխառեալ (յունական, արամեական) գիրերով հայագրութեան փաստերը, ինչպէս նաեւ սեփական հայկական գիրերու հնարաւոր գոյութեան հաւանականութեան վարկածը: Թողունք նաեւ նախամաշտոցեան հայուն եւ անոր գիրիմացութեան մասին մեր մտորումները եւ փորձենք վերաքննել եւ գիտակցիլ հայոց մասին առաջին յիշատակութենէն (երբ Թորգոմի որդի հայոց նախահայրը՝ Հայկ սպանեց Բելին Ն.Ք. 2492 թուականին) մինչեւ այսօր երկարող պատմութեան մէջ վերջին 1600 տարիներու մաշտոցեան գիրերով կնքուած ժամանակներու իրողութիւնը եւ այսօրուայ հայուն պատասխանատուութիւնը անոնց նկատմամբ սեփական հաւատարմութեան մէջ:

Լեզուն, որ բանական մարդու յատկանիշն է, (հայոց պարագային) Մաշտոցի շնորհիւ ունեցաւ նաեւ այդ բանականութեան իր հայերէնագիր խորհրդապահը:

Հայոց լեզուն, որ մինչեւ Հայոց այբուբենը կար «աննիւթականի» բանաւոր ելեւէջներով միայն, օժտուեցաւ յաւերժութիւն վաստակած հայագիր «բնակարանով»:

Յետ այդու հայ գիրն ու հայոց լեզուն եղան



գիտութեան եւ Աստուծոյ լոյսին բացուած հոգիի մեր դարպասները, մեր ազգային ինքնությունութեան պաշտպանութեան անսահանջ զինուորները, մեր պատմական յիշողութեան գրաւոր յաւերժացումը եւ այդ օրերու ծաւալներով «համաշխարհայնացման» դեմ մեր ընդդիմադիր տարբերակելիութեան ազգային բանալին, միով բանիւ՝ երեկի, այսօրուայ ու վաղուայ մեր գոյութեան առաջին գրաւակները:

Հայոց գիրերն էին, որ կարելիութիւն տուին, որ արդէն մէկ դար պաշտօնական կրօն հռչակուած քրիստոնէութիւնը վերջապէ՛ս դառնայ հայ մարդուն միսն ու արիւնը:

Եւ ահա մե՛նք ենք այսօր, Հայկի եւ Մաշտոցի ժառանգներս, մե՛ր սերունդն է աւանդապահը անոնց կտակին:

Չնչին ու անցողիկ նիւթական կտակներու համար մեր ամբողջ նախանձախնդրութիւնը ի սպաս դնողներս ի՞նչ չափով նախանձախնդիր ենք այսօր մեր ազգային եութիւնը մե՛զի ժառանգ ձգողներուն կտակին:

Ունի՞նք այդ անգին աւանդը մեր եութեամբն ապրեցնելու գիտակից աւանդապահի բարոյականութիւնը: Կը զգա՞նք գրոց հեղինակի ակընդէտ հայեացքը երկինքի բարձունքներէն:

Կանխապէս շահուած յաղթանակի ցնծութեամբ կը խայտայ անոր հոգին փոքր ու անվարժ թաթիկներով առաջին անգամ գրիչ բռնող եւ «Ի՛ր» նշանները թուղթին դրոշմող իւրաքանչիւր մանկան հետ, եւ անոր աչքերը դառնօրէն կը թրջուին երբ իր ցեղի նոյնքան սիրելի ու գորովալի թաթիկներ իրենց ծնողքին իսկ փափաքով գրաճանաչութիւնը կը սկսին օտար լեզուով եւ գրեթէ չկայ յոյս, որ գիտութեան լոյսին օտարին աչքերով բացուած հայեացք մը օր մըն ալ աշխարհին նայի հայաբար:

Ովքեր որ հայախօս ըլլալով հանդերձ կամայ թէ ակամայ կը կորսնցնեն իրենց ազգութեան հայ-մաշտոցեան անունին առաջին բաղադրիչը՝ հայու զգացողութիւնը, կը կորսուին հայութեան համար, բայց անհաւանական չէ, որ անոր սերունդները վերադառնան հայութեան եւ փրկուին որպէս հայեր, բայց անոնք որոնք կը կորսնցնեն իրենց հայ-մեսրոպեան անունին երկրորդ բաղադրիչը՝ մաշտոցով ամրագրուած հայախօսութիւնն ու հայագրութիւնը, ուշ կամ կանուխ կը կորսնցնեն նաեւ առաջին բաղադրիչը՝ հայ ըլլալու շնորհը եւ անոնց ու անոնց սերունդներուն համար գրեթէ չկայ վերադարձի հաւանականութիւն. վկայ՝ մեր ձուլուած ու

անէացած գաղութներուն պատմութիւնը, վկայ՝ ձուլուող ու հիւծուող գաղութներու ներկան:

Որպէս հայեր, որպէս մարդու հայ տեսակ, որպէս Աստուծային արարչութեան հայակնիք ստեղծագործութիւն, վասն մեր տեսակի պահպանման, շարունակման ու բարգաւաճման, պիտի դրսեւորե՞նք ակնկալեալ նախանձախնդրութիւն, թէ սերունդէ սերունդ փոխանցուած ու մեզի հասած արժէքները փոշիացնենք անփութօրէն եւ ապա յանցապարտի պատրաստակամութեամբ կառչինք օրուայ «առարկայական պատճառ» կոչուած խաբկանքի ինքնասպանական օղապարանին:

Հայոց պատմութեան գրեթէ մինչեւ հիւզ հազարամեակ երկարող յիշողութիւնը կը ներկայացնէ յայտնի եւ անյայտ, թուարկելի եւ անհաշիւ մաքառումներու ալեհեր կեանք մը, որուն ընծիւղներն ենք մենք այսօր: Եւ մեզի բաժին օրերու հոլովոյթին մէջ ուստանալու, հաստանալու, կենսունակ ճիւղ եւ աւշալի ծառաբուն դառնալու մեր ներուժը որպէս հայեր պայմանաւորուած է մե՛ր սերունդին հայաբար մաքառելու կարողականութեամբ:

Այն, ինչ որ մեր այսօրէն առաջ էր, յստակօրէն մե՛ր պատմութիւնն է, իսկ մեր այսօրը ինքնաբերաբար վաղուայ հայուն պատմութեան մե՛ր բաժինն է. կ'ընե՞նք արդեօք մեր կարելին, որով վաղուայ հայը իր ազգային պատմութեան մեր հանգրուանին կարենայ նայիլ առանց կշտամբանքի:

Մեսրոպեան գիրերով առաջին թարգմանութեան առաջին տողերն էին «Ճանաչել գիմաստութիւն եւ գիրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Մարդկային բանական միտքը առաւել բանականացնելու ա՛յս կոչն է ուղեցոյցը հոգիի խոնարհութեամբ վաստակուող մարդու կատարելութեան ճամբուն, ա՛ն է մեր նպատակակետը եւ միաժամանակ ճամբան հասնելու այդ նպատակակետին զոր պարտինք տեսնել, հասկնալ ու անով քալել ու ապրիլ հայ-մաշտոցեաններէս իւրաքանչիւրը, անխտիր:

Եւ արդ, 1600-ամեայ այս յոբելեանին, մեզի կը մնայ նորոգել մեր հաւատարմութեան ուխտը մե՛ր իսկ արեան եւ, որպէս աղօթք, օրհնութիւն մրմնջել ձեզի, ԳԻՐԵՐ ՄԱՇՏՈՑԵԱՆ, ձեր իսկ գիրերով:

ՄԻՅՐԱՆ ՂԱԶԷԼԵԱՆ



ՐԱՅ ԳԻՐԵՐՈՒ ԳԻՏԻՆ 1600-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

ԵՊիպրահայ Հոգևոր Պետրոն՝ ԵՊիպրոսի հայոց նորընտիր Առաջնորդ Հոգ. Տէր Աշոտ վրդ. Մնասկանեանի եւ Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Հայր Գրիգոր Օճոսփինոս Սրբ. Եպիսկոպոս Գուսանի հովանաւորութեամբ, Գահիրէի Հայ Ապօային Բշխանութիւնը Կիրակի, 30 Հոկտեմբեր 2005-ին, Հելիոպոլսոյ Պըրըքփանեան հանդիսարահին մէջ կազմակերպած էր հայերէն այբուբենի սրբեզման 1600-ամեակին նուիրուած հանդիսութիւն մը:

Մեր Մեծաարանջ Լեւոն թրատր մարեաններով դարերու խորքէն մեկի հասցնող հայ թիրերու թիւրին եւ թիւրարարին անպոթականութեան մասին բանախօսելու հրաւիրուած էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի դասախօս՝ փրոֆ. Պետրոս Պետրիեան, որուն ելոյթէն յետոյ թործադրուեցաւ թեղարուեստական յայտաթիր մը:

Մտորեւ կու տանք տիար Հրանդ Թէշիշեանի թրութիւնը այդ մասին:

«Տ.»

Գահիրէի մէջ Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակին նուիրուած հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը բաղկացած էր, կատարողական արուեստի երկու տեսակներէ՝ ասմուք եւ երգ:

Ժագ Յակոբեանի «Միայն Մէկ Գիր» բանաստեղծութիւնը արտասանեցին Նաթալի Սրապեան, Ռուբէն Սատ եւ Կարին Կրպոյեան: Երեքն ալ շնորհալի երեխաներ որ այս մարզին մէջ լաւ ապագայ կը խոստանան:

Ասմուքեցին Նաեւ Անի Օհանեսեան (Ժագ Յակոբեանի «Թեզմով» բանաստեղծութիւնը), Նորա Թեօհնէլեան ու Մարկրիթ Ասատուրեան (երկուքը՝ Պարոյր Սեւակի «Մայրենի Լեզու» բանաստեղծութիւնը յաջորդաբար): Կարելի է ըսել՝ որ այս վերջին երեք ասմուքողները հմտորէն մատուցեցին իրենց արուեստը, յայտագրին յատուկ հմայք մը հաղորդելով:

Գալով երգչախմբային ծրագրին, որ խնամքով պատրաստուած էր հմուտ խմբավար Սօ. Միհրան Ղազէլեանի ու անոր ազնուափայլ տիկնոջ տիկ. Գոհար Ղազէլեանի ջանքերով՝ կը բաղկանար երկու բաժիններէ: Առաջին բաժինը, որ կազմուած էր 4 խմբերգներէ եւ մէկ մեներգէ, կատարեցին ՀԲԸՄ-ի «Ծիածան» եւ Յուսաբեր Մշակութային Միութեան «Ծաղկաստան» զոյգ երգչախումբերը միասնական ելոյթով:

Այս վերջին երեւոյթը մեզի ուրախութիւն պատճառեց: Երանի թէ յետ այսու յարատեւ, մանաւանդ երեխաներու գործունէութեան պարագային:

Մեր սիրելի մանուկներն ու պատանիները իրենց ոգեւորութեամբ վարակեցին հանդիսատեսին: Սօ. Ղազէլեան, Նաեւ տիկ. Գոհար՝ բացի բարձրորակ արհեստավարժ երաժիշտներ ըլլալէ, երկուքն ալ օժտուած են մանկավարժական ծիրքով եւ գիտեն ինչպէս արուեստի հուրը հաղորդել իրենց ղեկավարած անձերուն:

Պետք է յիշատակել Նաեւ՝ պատանի Ռուբէն Սատը, որ գեղեցկորէն մենակատարեց Ալեքսէյ Հեքիմեանի «Հայոց Տառեր» երգը: Ծրագրի ամենավերջին՝ փոքրիկ բայց հաճելի «անակնկալը» մատուցուեցաւ ներկաներուն, երբ Արթուր Գրիգորեանի «Մեր Հայ Լեզու» խմբերգի աւարտին, անսպասելիօրէն առաջ եկաւ փոքրիկն Կարէն Թորոսեան ու իր հմայիչ ձայնով եր-

գեց աւարտական ֆրագ մը, զուարթութիւն հաղորդելով դահլիճին: Այս փոքրիկ անակնկալին գաղափարը տիկ. Գոհարինն էր, որ Նաեւ մարգած էր Ռուբէն Սատը եւ միւս երեխաները:

Գալով համերգի երկրորդ բաժինին՝ կարելի է ըսել, որ բաւական յաջող էր, եթէ Նկատի ունենանք Եգիպտոսի հայ համայնքին այսօրուան անբարենպաստ պայմանները:

Սօ. Միհրան Ղազէլեան գիտէ ինչպէս լաւագոյն արդիւնքներու հասնիլ առկայ պայմաններու սահմաններուն մէջ: Այս գործը դիւրին գործ մը չէ, եթէ Նախ Նկատի ունենանք երգչախումբի մը կազմակերպչական հարցերու դժուարութիւնները՝ առօրեայ կեանքի ներկայ բարդ պայմաններուն մէջ, ապա Նաեւ, երգչախմբային կազմի ձայնային հաւասարակշռուածութեան հետ կապուած դժուարին հարցը (14 հոգիկն կանանց խումբին դիմաց ունիւք միայն 6 հոգիկն տղամարդկանց խումբ մը), Նաեւ երգիչներու արհեստավարժական մակարդակը:

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը (Սօ. Մ. Ղազէլեանի ջանքերով կազմուած 2003-ի Նոյեմբերին) հանդիսատեսին ներկայացուց հիւզ խմբերգ:

Երկու Կոմիտասեան ստեղծագործութիւն «Ով Մեծաքանչ Դու Լեզու» եւ «Մայրենի Լեզու», Վահան Պետելեանի մշակած «Նմանեալ Մովսէսի» շարականն ու «Ռոքան Դիցակերտ» տաղը եւ Ստեփան Լուսիկեանի «Նոր Հայաստան» հրաշալի խմբերգը:

Ինչպէս միշտ, այս անգամ ալ դաշնամուրային իր փայլուն կատարողութեամբ ընկերացաւ տիկ. Իրինա Աբգարեան:

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ընդհանրապէս համերգի բոլոր մասնակիցներուն եւ մասնաւորապէս մեր տաղանդաւոր Սօ. Միհրան Ղազէլեանին ու Նոյնպէս իր տաղանդաւոր տիկնոջ՝ մեներգչուի (Նաեւ մանկավարժ) Գոհար Ղազէլեանին, որոնք 2003 Սեպտեմբերէն սկսեալ մեր համայնքի երաժշտական - մշակութային կեանքին մեծ աշխուժութիւն մը ներարկեցին:

Հրանդ Թէշիշեան



ՄԵՐ ԳՈՅԻ ԼՈՅՍԸ

Ամեն անգամ երբ խաւարը կը պատէ Յայոց Աշխարհը, Աստուած լոյսի շող մը կ'արծակէ մեր ազգին համար: Մի՞թէ այդ՝ լոյսի փայլատակումէն չեն Գիրերը Յայոց: Գիրերը մեր՝ Մերոպաշունչ Երկաթագիր:

Հանճարեղ Պարոյր Սեւակն այս առիթով ըսած է. «Անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար»:

Այո՛ անհնար ու անելանելի կեանք մը կ'ապրէր Յայոց Աշխարհը, երբ մեր ժողովուրդը իր հերթական տաղանդաւոր զաւակը ծնաւ: Ան պիտի ըլլար այրն այն իմաստուն, որ արարչական իր սուրբ հանճարով պիտի գտներ ազգին պահպանման հնարը: Երկար ու ձիգ դարերու ընթացքին մէկ անգամ չէ որ մենք ազգովին մահուան դէմ ելանք՝ երես առ երես: Բայց միշտ յաղթեցինք՝ նոյնիսկ մեռնելով: Երբեք՝ չ'ապրեցանք մեռնելու համար, որովհետեւ մեր դարաւոր երթը, կը լուսաւորէ լոյսը երկնային: Քանզի գիր ունինք Աստուածատուր, որ մէկ յաղթութեան դրօշ կը դառնայ, մէկ կռուի զինուոր, մէկ պաշտպանութեան նիզակ ու վահան եւ պատերազմի ահեղ դաշտ տանող անպարտ զօրավար: Օր մը աղօթք է, օր մը մագաղաթ, օրոցքի երգ է մեր մամիկներուն շուրթերուն բարի, սիրահար հայու թարգմանը սրտի ...

Արդէն մեր գիրը դարձած է 1600 տարեկան: Բայց մանուկ է դեռ՝ թոթով մանուկ մը: Ալեհեր, իմաստուն հսկայ մը, որ կրկին կը մանկանայ ամեն մանուկի թոթովանքին հետ:

Այսօր ազգովին եւ շատ մեծ սիրով, երախտագիտութեան մեծ զգացումով, կը նշենք մեր հրաշք գիրերուն ստեղծման ծնունդին տարեդարձը: Անուշ կարկանդակի վրայ մէկ մոմ չէ որ կը վառենք, այլ հազարաւոր մոմեր աշխարհով մէկ սփռուած հայոց եկեղեցիներուն մէջ, աղօթք կ'ընենք, ու հազար մաղթանք՝ յարատեւութեան ու անմահութեան համար մեր 36 քաջ մարտիկներուն, որոնք իրենց յատուկ կռիւով մեզ հայ կը պահեն:

Աշխարհասփիւռ հայ ժողովուրդին մէկ պզտիկ մասը որ Եգիպտոս հաստատուած է, չի կրնար անմասն մնալ Յայ Գիրերու Գիւտին 1600 ամեակին նուիրուած հանդիսութիւններէն: Հանդիսութեան ձեռնարկներու շարքին, կ'ուզենք նշել յատկապէս Աղեքսանդրիոյ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» քառաձայն երգչախումբին ելոյթը, Աղեքսանդրիոյ Արուեստի Կեդրոնին մէջ:

2-3 ամիս, շաբաթը 3-4 անգամ, ելոյթին վերջին շաբաթները ամեն օր, Ազգային Առաջնորդարանին մէջ կը հաւաքուին գաղութին տարբեր տարիքի, տարբեր կրթութեան ու մակարդակի, մեծ մասը ոչ երաժշտական կրթութեան տէր մարդիկ եւ հայերէն երգ կը սորվին: Կան մարդիկ, որոնք հայերէն խօսիլ ու կարդալ չեն գիտեր, բայց կը փորձեն, կը ջանան եւ կ'երգեն: Իսկ յայտագիրը դիւրին չէ բնաւ: Կոմիտաս, Մակար Եկմալեան, Ներսէ Շնորհալի, Վարդան Արեւելքցի, Մովսէս Խորենացի՝ տաղեր, շարականներ նաեւ ժամանակակից երգահաններ՝ Ալ. Յարութիւնեան, Ալ. Յեքիմեան, Էտկար Յովհաննէսեան եւ այլն:

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան հովանա-

ւորութեամբ, երգչախումբի ղեկավար օրդ. Լիտիա Խունկանեանի աշխատասիրութեամբ, Տէր Գրիգոր քիւյ. Մուրատեանի հետեւողականութեամբ, երգչախումբի անդամներու յամառ ջանքերով եւ տիար Կարի Պօհճալեանի նուագակցութեամբ, հնարաւոր եղաւ կայացնել այս համերգը, ամիսներու ոչ դիւրին աշխատանքը տուաւ իր բարձր արդիւնքը: Ոչ մասնագետ երգիչներու հետ աշխատիլ եւ ունենալ այսքան լաւ արդիւնք՝ հրաշալի է: Պատասխանատուութիւնը ալ անելի մեծօքաւ, երբ պարզուեցաւ որ համերգը պիտի կայանայ Աղեքսանդրիոյ Արուեստի Կեդրոնին մէջ: Կը նշանակէ նաեւ օտար հանդիսատես: Եթէ մեր ժողովուրդը կէս խօսքէն ալ կը հասկնայ իր երգը, օտարին պէտք է պատշաճ մակարդակով ներկայացնել զայն: Մատուցանել այնպէս, որ հասկնայ, սիրէ մեր երգը: Թէեւ երաժշտութիւնը լեզու չունի: Անոր լեզուն հմայելն է ...

Բայց փառք Աստուծոյ, բոլոր մտահոգութիւններն ու յուզումները մնացին փորձասրահին մէջ: Հիմա այլ կարգի յուզում պատած է բոլորին: Հաշուուած վայրկեաններ կան մինչեւ համերգին սկիզբը ...

Ինչպէս գարնան՝ անշունչ, պաղած ծառերը հագուստ կը հագնին, հանդիսատեսին ալ շունչ եւ հագուստ հագաւ կարճ պահու մը մէջ:

Պատերը կարծես ետ ետ կ'երթան եւ խաւարի ու լռութեան մէջ նիւրհոլ սրահը լեցուեցաւ մարդոց ու ծաղիկներու շունչով, ուրախ ժպիտներով, պայծառ լոյսերով:

Հնչեց բացման հանդիսաւոր խօսքը, ապա բազմաթիւ ծաղկեկողովներու շուրջ յայտնուեցաւ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» երգչախումբը: Դաշնամուրին հնչիւնները եւ օրդ. Լիտիայի ձեռքերուն վստահ շարժումները կ'ազդարարեն «Ով Յայոց Աշխարհ» երգին եւ երգահանդէսին սկիզբը: Իրար կը յաջորդեն տաղեր, շարականներ, երգեր՝ ընդմիջուելով հանդիսականի ջերմ եւ քաջալերող ծափերով:

Հնչեցին մեներգեր, զուգերգեր, եռաձայն ու քառաձայն բազմաթիւ կատարումներ:

Դահլիճը թնդաց ծափերէն, երբ կատարուեցաւ Պ. Սեւակի եւ Էտկար Յովհաննէսեանի «Երեւան Էրեբունի» երգը:

Համերգին մեծ շուք տուին տիկ. Մարիա Հալաճեանի կատարումները: Մեներգներու եւ մի քանի զուգերգներու կատարումով տիկ. Մարիան իր հաճելի մասնակցութիւնը բերաւ այս գեղեցիկ համերգին:

Աւարտեցաւ երգահանդէսը, բայց մարդիկ չեն շտապէր հեռանալ սրահէն, կ'ուզէն որքան հնարաւոր է երկարածգել իրենց ներկայութիւնը Մերոպաշունչ երգերով լեցուն այս մթնոլորտին մէջ:

Յայ Գիրերու Գիւտի 1600 ամեակին նուիրուած երգահանդէսը ավարտեցաւ, բայց յորելնական ձեռնարկները կը շարունակուին:

Ամփիկ Յակոբեան - Կանխմեան



ՇԵԼԻՈՊՈԼԻՍԸ 100 ՏԱՐԵԿԱՆ

Ո՞վ կարող էր պատկերացնել որ կարելի էր Կիզեի բուրգերը տեսնել Յելիոպոլսոյ Պազիլիք եկեղեցիին մուտքին առջեւ կենալով: Երազ չէր այս, այլ իրականութիւն՝ մօտ հարիւր տարիներ առաջ, երբ Պելճիքացի հանճարեղ դրամատեր եւ գործարանատեր Պարոն Էտուար Ամբէն գաղափարը յղացաւ նոր արուարձան մը հիմնելու Գահիրէն 15 քմ. արեւելք գտնուող Ապպասիէի անապատին մէջ:

Ան այս յանդուզն ծրագրին իրականացումը կը պարտի հայազգի հռչակաւոր առեւտրական Պօղոս Նուպար Նուպարեանի աջակցութեան:

Պարոն Էտուար Ամբէն, համեստ ընտանիքի գաւակ, ծնած է Պելճիքական գիւղի մը մէջ 1852-ին ու մահացած Պրիւքել՝ 1929-ին: Պօղոս Նուպարեան, որդին հանրածանօթ եգիպտահայ դիւանագետ Նուպար փաշայի, ծնած է Կ. Պոլիս 1851-ին ու մահացած Բարիզ՝ 1930-ին:

Այս երկու տարեկից անձնաւորութիւնները, բոլորովին տարբեր միջավայրերու մէջ ծնած եւ մեծցած ու տարբեր քաղաքակրթութիւններու պատկանող մեքենագետներ էին պարզապէս եւ բաւարար գաղափար չունէին ճարտարապետութեան կամ երկրաչափութեան մասին: Սակայն, իրենց ունեցած նկարագրի խիզախութիւնն ու ապագայ կեանքի պայմաններուն անհրաժեշտութիւններուն քաջատեղեակ ըլլալն էր, որ ներդաշնակօրէն շաղախեց զանոնք եւ դարձուց տիպար գործակիցներ:

20-րդ դարու սկիզբը պատմական Գահիրէի սահմանները սկսած էին այլեւս կաշկանդել գայն: Գահիրէն պետք է որ ընդլայնէր ու հոն հաստատուող եւրոպական գաղութներուն համար նոր արուարձաններ հիմնուէին:

Նեղոսի ափին, Զար Էլ Տուպարա շրջանին մէջ անգլիացիները արդէն բնակութիւն հաստատել սկսած էին եւ 1906-ին Garden City թաղամասի շինութիւնը սկսած էր:

Պեիլեր (Baehler) ընկերութիւնը Կեզիրէի հիւսիսային մասը գնեց եւ 1905-1907-ին Չամալէքի շրջանին շինութիւնը սկսաւ եւրոպական ոճի գեղեցիկ պալատներով, մենատուններով ու շէնքերով:

Սակայն, երբ Պարոն Ամբէն որոշեց քաղաք մը հիմնել, ան նախընտրեց բոլորովին անջատուիլ Գահիրէն, որ նոյնիսկ այդ ժամանակ խճողուած կը նկատուէր: Ան ուղուեցաւ դէպի անապատ՝ փնտռելով չոր ու մաքուր օդ, նաեւ անսահման տարածութիւն ապագայ ընդլայնման համար:

Պարոն Ամբէն եւ Պօղոս Նուպար, շտրիկու իրենց նիւթական հարուստ կարելիութիւններուն, Խտիւ Ապպաս Յելմի Բ.-ի յօժարութեամբ 13 Մայիս 1905-ին կարողացան 6000 ֆետտան հողատարածք մը գնել (ֆետտանը 1 Ե. Ո.), իրականացնելու համար իրենց ծրագիրը: Նախքան շինարարական աշխատանքներուն սկսիլը, որոշուած էր 15 քմ. երկարութեամբ ելեկտրական հանրակառքի գիծը շինել, կապելու համար Գահիրէն նոր արուարձանին:

Արուարձանը Յելիոպոլիս կոչուեցաւ քանի որ ան մօտ էր նախկին փարաւոնական քաղաք Օնին, որ հին եգիպտերէնով «արեւ» կը նշանակէ: Յետագային յոյները զայն Յելիո (արեւ) պոլիս (քաղաք) կոչած էին: Յնագոյն ժամանակներէն այդտեղ կը գտնուէին «Արեւ» աստուծոյ նուիրուած մեհեանները: 568 Ն. Ք. թուականին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան սրբապղծեց զայն, իսկ 525 Ն. Ք. թուականին Պարսից Կամբիզ (Cambyses) արքան վերջնականապէս ւաւերեց զայն:

Շրջանը Յելիոպոլիս անուանելով՝ կարծեք հիմնադիրներուն նպատակն էր անապատի աւազներուն տակ թաղուած ւաւերակներուն փոխարէն գրեթէ նոյն տեղը արդիական քաղաք մը կառուցել:





Արուարձանին բուն ծրագիրը 2 մաս է կր բաղկանար: Առաջինը Յելիոպոլիս անունով, որուն սահմանները հետեւեալներն էին: Արեւմուտքէն Ռօքսին եւ Իպրահիմ էլ Լաքքանի փողոցները (Նախկին Ապպաս Յէլմի փողոց), հիւսիսէն ձիարշաւի մարզադաշտը (Ներկայի Merryland-ի պարտեզները իրենց շրջակայքով), արեւելքէն Ապու Պաքր էլ Սատտիք փողոցը (Նախկին օդակայանի փողոցը) իսկ հարաւէն Պարոն Ամբէնի եւ Պօղոս Նուպարի պալատները:

Ծրագրին երկրորդ մասը Ալմազա արուարձանն էր որ անջատուած պիտի ըլլար Յելիոպոլիսէն 1 քմ լայնքով անապատային տարածութեամբ:

1906-ին Պարոն Ամբէն հիմնեց «La Societe des Oasis d'Heliopolis»-ը ու շուտով սկսան շինարարական աշխատանքները Պելճիքացի ճարտարապետ Էրնէսթ Կասպարի եւ Ֆրանսացի ճարտարապետ Ալեքսանտր Մարսէլի Նախաձեռնութեամբ ու հսկողութեամբ:

Heliopolis Palace Hotel-ը առաջին շինութիւնն էր, սկսուած 1906-ին: Անտարակոյս, վերել յիշուած ճարտարապետներուն միասնական աշխատանքին գլուխ գործոցն էր եւ երբ 1910-ին բացոււմը կատարուեցաւ, ան կը նկատուէր աշխարհի ամենամեծ ու ամենաշքեղ պանդոկը:

Էրնէսթ Կասպար 1908-ին շինած է Յելիոպոլիսի ընկերութեան կեդրոնատեղին (Heliopolis Palace պանդոկին դիմացը), 1909-ին Heliopolis House պանդոկը Groppi սրճարանով եւ 1912-ին Sacré Coeur աղջիկներու վարժարանը:

Ալեքսանտր Մարսէլ (1907-1910)-ին շինած է Պարոն Ամբէնին հնդկական ոճով չնաշխարհիկ

պալատը որ կը նկատուի Յելիոպոլիսի խորհրդանշանը, Պօղոս Նուպարի արաբական ոճով պալատը, Սուլթան Յիւսէյնի կնոջ ապարանը Պարոն Ամբէնի պալատին դիմաց (այժմ աղջիկներու վարժարան է), Իպրահիմ էլ Լաքքանի կամարներով շէքերու շարքը եւ 1911-1913-ին բիւզանդական ոճով եւ Այա Սոֆիա եկեղեցիին նմանութեամբ՝ Պագիլիք եկեղեցին:

13 Ապրիլ 1911-ին Պելճիքայի թագաւորին ու թագուհիին Ներկայութեամբ հիմնաքարը դրուեցաւ Պագիլիքին, ուր ըստ իր ձգած կտակին կը հանգչի Պարոն Ամբէնը 1930-էն ի վեր:

Յելիոպոլիսի առաջին մզկիթը մէյտան Կամէի մզկիթն է շինուած 1911-ին:

Յելիոպոլիսի Ընկերութեան դրամագլուխին մեծ մասը տրամադրուեցաւ Յելիոպոլիսի շինութեան: Հակառակ որ մեթոդի եւ հանրակառքի գիծերը միացուցին Յելիոպոլիսը Ալմազայի անապատին, սակայն շինարարութեան բուն ծրագիրը չիրականացաւ եւ Ալմազան գործածուեցաւ որպէս մեթոդի կառքերուն կանգար, աշխատանոց եւ 1910-ին շինուեցաւ Ալմազայի օդակայանը արհեստասէր (amateur) օդաչուներու համար: Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքին ամերիկացիները շինեցին ուրիշ օդակայան մը, Pine Field Military Airport անունով, (Pine-ը մայրիի ծառերը արդէս ո՛ր գտան անապատին մէջ) որը այժմ Գահիրէի հին օդակայանն է:

1911-ին Պօղոս Նուպարի Նախաձեռնութեամբ «La Societe Oasis d'Heliopolis»-ը 2.513 մ. հողամաս մը կը ծախէ հայ գաղութին մէջը 1 դրուշի, դպրոց ու եկեղեցի մը շինելու համար: 1924-ին, շնորհիւ Պօղոս Նուպարի 4000 Ե. Ռ. նուիրատուութեան կարելի եղաւ Նուպարեան վարժարանը կառուցանել, սակայն եկեղեցիի մը շինութեան ծրագիրը երբեք չիրականացաւ:

Այս իւրայատուկ արուարձանը իր կանոնաւոր ու լայն փողոցներով ու հրապարակներով, շքեղ ապարաններով ու մենատուններով, ժողովրդական հանգստաւետ յարկաբաժիններով, պարտեզներով, բացօթեայ շարժապատկերի վայրերով, չոր ու մաքուր օդով եւ երթեւեկի ճշդապահ միջոցներով շուտով մագնիսի նման իր շուրջ հաւաքեց տարբեր մակարդակներու եւ ազգութիւններու պատկանող բնակիչներ Գահիրէն ու Կիզէն:

Կամաց կամաց եռուզեռը սկսաւ ու նորակա-





ռոյց շէնքերը կեանքով լեցուեցան: 1922-ին Յելիոպոլիս ուներ 12000 բնակիչ, իսկ 1930-ին 30000:

Այսօր այդ թիւը կը հասնի 250000-ի:

Յելիոպոլիսի փառքի շրջանը կը նկատուի 1930-1960-ը: Այդ հրաշալի քաղաքին կեանքի պայմանները հասած էին իրենց գագաթնակետին: Սակայն 60-ական թուականներուն ըսկըսան վայրէջքի առաջին քայլերը: 1952-ի յեղափոխութենէն ետք նախապատուութիւններն ու մտածելակերպը մեծ փոփոխութիւն կրած էին: Ըստ նոր կառավարութեան ծրագրին ներկան պետք է որ գոհուեր ապագային համար: Շինութիւն կամ նորոգութիւն բոլորովին դադարեցան Յելիոպոլիսի մէջ: Յելիոպոլիսը իր իրաւունքէն աւելի ինքնաբերաբար ստացած էր արդէն, այդքանը բաւարար նկատուեցաւ, աւելի կենսականը բանակը զօրացնել, Ասուանի մեծ ջրամբարը շինել եւ Նասր կոչուած նոր արուարձան մը հիմնելն էր:

Միեւնոյն ժամանակ, կառավարութեան քաղաքական ու տնտեսական դիրքորոշումին պատճառաւ մեծ թիւով օտար բնակիչներ ինչպէս հայեր, յոյներ, իտալացիներ ու հրեաներ սկսան հեռանալ երկրէն, մանաւանդ իրենց կայք հաստատած Յելիոպոլիսէն:

Եօթանասունական եւ ութսունական թուականները իրենց հետ բերին ընկերվարութեան անկումն եւ դրամատիրութեան ու ազատ տընտեսավարութեան շրջան մը:

Ինչպէս որ վաթսունական թուականներուն Յելիոպոլիսի եգիպտացի եւ օտար բարեկեցիկ ու զարգացած դասակարգին մեծ մասը անյայտացաւ, նոյնպէս 70-ական եւ 80-ական թուականներուն անվերադարձ շնջուեցան գեղեցիկ մենատուններուն ու պալատներուն մեծ մասը եւ փոխարինուեցան արագ շինուած, ճաշակէ գուրկ, բարձր ու տգեղ շէնքերով: Բացարձակապէս մենատուններու տրամադրուած թաղերուն մէջ, փուշի նման բարձրացան աններդաշնակ տգեղութիւններ: Յելիոպոլիսի ընկերաբանական կառոյցն ու ճարտարապետական գեղեցկութիւնը անկումի ենթարկուեցան:

Սակայն բարեբախտաբար 1990-ական թուականներուն Գահիրէի կառավարութիւնը բաձարցակապէս արգիլեց մենատուններու քանդումը: Երկար տարիներ անտեսուած Յելիոպոլիսը կրկին ինքնամքի, հոգատարութեան ու պաշտպանութեան արժանացաւ:

100 ամեակի սեմին Յելիոպոլիսի հնագոյն ու կեդրոնական թաղամասը իր իւրայատուկ արաբական ոճով ու կամարներով «պահպանուած շրջան» նկատուեցաւ ու մեծ ճիգ թափուեցաւ իր անցեալի փառքը վերակենդանացնելու համար: Յիսնամեակէ մը աւելի լքուած վիճակի մէջ ձգուած Պարոն Ամբէսի պալատը*, յաջող բանակցութիւններէ ետք, Յելիոպոլիսի զարգացման միութիւնը կարողացաւ ձեռք ձգել իր նոր տերերէն: Վերանորոգման աշխատանքները սկսան անմիջապէս ու գեղեցիկ պարտեզներ ու ծառաստաններ շրջապատեցին զայն:

Յելիոպոլիսը իր 100 տարիներու կեանքին ընթացքին անցած է ամեն տեսակ շրջաններէ: Այսօր, ան տարածուած, խճողուած ու շատոնց դուրս ելած է իր սահմաններէն, սակայն տակաւին կը պահէ իր անցեալի փառքը: Կարծեք իր հիմնադիրներուն ձեռքը կը պահէ զայն կորուստէ:

Ճիշդ է որ այսօր անկարելի է Յելիոպոլիսէն բուրգերը տեսնել, սակայն բաւական է Ամբէսի պալատը տեսնել գիշերով երբ ան գոհարի մը նման կը շողայ:

*1956-ին պալատը գրաւուած էր Եգիպտոսի կառավարութեան կողմէ եւ աճուրդով ծախուած սուրիացիի մը եւ սեւուցիի մը:

Սօսի Յակոբեան

Աղբիւրներ


مصر الجديدة - حكاية في مائة عام
نبيل شوكت - عن مؤسسة الأهرام
Memoire d'Egypte - par Gerard Viand
Le Progrès - Magazine (6/8/1995)

Heliopolis - Robert Ilbert
Edition du CNRS

Cairo - André Raymond
Translated by Willard Wood



ՆՈՐ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Գահիրեի ՀԲԸՄ-ի Սաբենիկ ճ. Չա ղը հիմնադրամի հրատարակչական ֆոնդին մեկենասութեամբ, Նուպար տպարանէն լոյս տեսաւ տողք. Սուրէն Պայրամեանի կազմած «Հայ Մամուլը Ե իպտոսի Մէջ մատենա խտական ցուցակ» հատորը, որուն շնորհահանդէս – ինեձօնը կատարուեցաւ Գահիրեի Ազ ալին Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Ստորեւ կը հրատարակենք այդ առթիւ Ազ ալին Առաջնորդարանի դիւանէն մամուլին յորած հաղորդա ղոթիւնը, նաեւ երեկոյին բացման խօսքը, արտասանուած՝ Գահիրեի Քաղաքական Ժողովի եւ ՀԲԸՄ-ի Ե իպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թէրզեանի կողմէ:

«Տ.»

ԸՆԴՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 14 Յոկտեմբեր 2005-ին, երեկոյեան ժ. 7-ին Գահիրեի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Տողք. Սուրէն Պայրամեանի աշխատասիրած «Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ» նոր հրատարակուած հատորին շնորհանդէս-գինեձօնը:

Ներկայ էին հանդիսութեան հովանաւոր Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Յոզ. Տ. Աշոտ Վարդապետ Մնացականեան, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Հայր Գրիգոր Օգոստինոս Սրբազան Եպիսկոպոս Գուսան, Գահիրեի հոգեւոր հովիւ Տ. Չենոն Քիւյ. Բարսեղեան, ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Տողք. Ռուբէն Կարապետեան, Գահիրեի եւ Աղէքսանդրիոյ Պատկ. Թեմական Ժողովներու ատենապետներ՝ Տիար Անդրանիկ Մեսրոպեան եւ Տիար Լեւոն Գաղթաճեան, Պատ. Քաղաքական Ժողովի ատենապետ Տիար Պերճ Թէրզեան եւ Ազգային Իշխանութեան անդամներ, ինչպէս նաեւ գիրքը արժեւորող բարեկամներ:

Երեկոյին բացումը կատարեց Տիար Պ. Թէրզեան եւ ամփոփ կերպով ներկայացուց հանդիսութեան նպատակը եւ անկէ քաղուած պատգամը: Ան բարձր գնահատեց Տողք. Ս. Պայրամեանի տարած անխոնջ աշխատանքը եւ ապա հրաւիրեց գայն իր սրտի խօսքը ըսելու:

Տողք. Պայրամեան ներկայացուց երկար տարիներու այս աշխատութեան ստեղծման պատմութիւնը եւ մասնակից դարձուց ներկաները անոր դժուարին, հետաքրքրական եւ հաճելի դրուագներուն: Ապա իր շնորհակալութիւնները յայտնեց մասնաւորապէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որուն Ս. Չազըր Ֆոնտին միջոցներով կարելի եղաւ իրականութիւն դարձնել հատորին լոյս ընծայումը, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք իրենց նպաստը բերած են ամբողջ աշխատանքին ընթացքին:

Ապա, Առաջնորդ Հայր Սուրբի գնահատանքի խօսքէն ետք գինի հեղուեցաւ նոր գիրքին վրայ եւ երեկոն աւարտեցաւ ներկաներու շնորհաւորանքով եւ կոկիկ հիւրասիրութեամբ:

ԴԻՄԱՆ ԳԱՅԻՐԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



Տողք. Սուրէն Պայրամեան ելոյթի պահուն, նստած աջէն՝ տիար Լեւոն Գաղթաճեան եւ տիար Պերճ Թէրզեան:



Գինիի հեղման պահուն ձախէն՝ տիար Լեւոն Գաղթաճեան, տողք. Սուրէն Պայրամեան, Յոզ. Տ. Աշոտ վրդ. Մնացականեան, Հայր Գրիգոր Օգոստինոս Սրբ. եպ. Գուսան եւ տողք. Ռուբէն Կարապետեան:



Տիար Պերճ Թերզեանի Խօսքը

Հոփեշնորի Առաջնորդ Հայր Սուրբ,
Արհիպապարի Գերապայծառ Տէր,
Արժանապարի Տէր Հայր,
Ն. Գ. ՀՀ-ի Լիպօր եւ Արարկարօ Դեսպան,
Պարկառելի Թեմական Ժողովի մեծարօյ արեւնապետ եւ յարօարժան անդամներ,
Աղեքսանդրիոյ Պարկառելի Թեմական Ժողովի մեծարօյ արեւնապետ,
Եփպրահայ Կանապան կազմակերպութիւններու յարօարժան ներկայացուցիչներ,
Սիրելի Ներկաներ.

Գահիրէի Քաղաքական Ժողովը ընդառաջելով Եփպրահայ Թեմի Առաջնորդ Հոփ. Աշուր Վրդ. Մնացականեանի առաջարկին, այսօր կազմակերպած է շնորհանդէս – օինեձօն մը, նշելու համար լոյս ընծայումը «ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵՊԻՊՏՈՍԻ ՄԷՔ» խորաօրով հատորին, Կոր աշխարասիրած է եփպրահայ մտաւորական, ազօային հասարակական օործիչ եւ Գահիրէի Թեմական Ժողովի երկարամեայ արեւնադպիր Տոքթ. Սուրէն Պայրամեան:

Սոյն հատորը լոյս տեսած է Գահիրէի մէջ Նուպար Տպաօրարունէն, Գահիրէի Հայկական Բարեօորձական Ընդհանուր Միութեան Սաթենիկ Չաօըր Հիմնադրամի միջոցներով:

Թերեւս հարց տուողներ ըլլան, թէ ինչո՞ւ յարկապէս այս հատորին համար տեղի կ’ունենայ շնորհանդէս – օինեձօն մը, երբ մեր օաղութին մէջ բաւական ժամանակէ ի վեր կը հրատարակուին բազմաթիւ այլ օիրքեր:

Տեղին է յիշել օրինակ, թէ նոյն ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չաօըր Հիմնադրամը, անկախաբար օաղութիս մէջ օործող այլ կառոյցներու կողմէ հրատարակուածներէն, վերջին րասնամեակին հրատարակած է 61 անուն մեծ ու փոքր հատորներ, որոնց մէջ կը օտնուին քանի մը հար կոթողական հրատարակութիւններ: Հրատարակիչ Միութիւնը այս բոլորէն միայն մէկ հատորին համար շնորհանդէս – օինեձօն կազմակերպած է, ի ներկայութեան հայրենիքէն եկած հեղինակին, յանձին արուեստարան Ծահէն Խաչատուրեանի:

Մեր կարարած հարցադրումին որպէս լուսաբանութիւն ճշդենք, թէ Քաղաքական Ժողովը այս երեկոն կազմակերպելու ժամանակ, նկարի առած է քանի մը հանօամանքներ:

Առաջին հանօամանքը այն է, որ հրատարակուած հատորը կը վերաբերի եփպրահայ օաղութի պարմութեան, քանի որ ան կը ներկայացնէ Եփպրոսի մէջ լոյս տեսած հայ մամուլին մարենաօիրական ցուցակը, առաջին եփպրահայ թերթին՝ «Արմաւենի»-ին 1865 Մարտի 16-ին լոյս ընծայումէն մինչեւ այսօր:

Երկրորդ հանօամանքը այն է, որ այս րարի եփպրահայ մամուլի 140 ամեակն է եւ րօնելով Տոքթ. Պայրամեանի հատորին լոյս ընծայումը, անուղակիօրէն կ’անդրադառնանք նաեւ ամբողջ 140 րարուան րեւոդութեան, եփպրահայ մամուլի նուիրեալներուն յոնարանջ ու սպառիչ, բայց եւ այնպէս սրեղծաօորձ աշխարանքին:

Երրորդ հանօամանքը այն է, որ այս րարի, հայ ժողովուրդը հայրենիքի թէ սփիւքի մէջ, արդար հպարտութեամբ կը րօնէ Հայ Գիրի Գիւրին 1600-ամեակը եւ ի՞նչ ատելի լաւ առիթով կարելի է անօամ մը եւս նշել մեր պարմութեան այդ հրաշքը, քան օնահարմուովը Գիրի եւ Գիրքի երկրպաօուի մը:

Եւ վերջին հանօամանքը այն է, որ Տոքթ. Սուրէն Պայրամեան մաս կը կազմէ այս երկրին մէջ, մեր կողքին, մեկի հետ սարող, շնչող եւ օործող այն «արբապան խենդ»երուն որոնք հարի թէ լրացնեն մէկ ձեռքի մարներուն թիւը եւ որ երեսուն րարի է ի վեր իր օնահարելի լուման կը բերէ մեր ազօային վարչամեքենային բարուք օործունէութեան:

Իրաքանչիւր հանրային հարաք, ինչպէս օրինակ այսօրուանը, առիթ մըն է օաղափար մը, պարօամ մը փոխանցելու:

Աը կարծենք թէ այսօրուան հարաքին պարօամը, օիրի եւ օրականութեան արժանատր մը օնահարելու կողքին, համերաշխութիւնը, համաօորձակցութիւնը եւ փոխադարձ յարօանքն է:

Այս հասարարումը կարարելէ յետոյ, կրնանք վարահօրէն ատելցնել, թէ այդ պարօամին ոօի-ին լաւօոյն փասարն է, այսօր ներկայացուող հատորը:

Արդարեւ, օաղութիք մը չէ, թէ հրատարակիչ Միութեան պարասխանարուները եւ հատորը աշխարասիրողը, ազօային օոյարեւումին համար մղուող հասարակայ պայքարին մէջ, անպարմանօրէն նոյն խրամարին մէջ չեն օտնուիր:



Սակայն, այդ իրողությունը, ի պարհի հրապարակիչ Միութեան վարչութեան, լիաաւորութեամբ Գիար Օննիկ Ղըբբարանեանի, երբեք արձեւք չէ հանդիսացած աշխատասիրողին լործը անխրտական եւ անաչառ ուղիով ըստ արժանայն լնահատելու եւ հրապարակելու:

Այս առթիւ Գրեղին է եւ շար կարեւոր շեշտել նաեւ, թէ համերաշխութիւնը, համալործակցութիւնը եւ փոխադարձ յարմարը, 30 Գարիներէ ի վեր կը շարունակեն մնալ մեր լաղութին հիմնական յարկանիշները, այն օրէն երբ 1975-ին, ի պարհի մեր աւանդական կազմակերպութիւններուն ներկայացուցիչներուն – որոնցմէ ոմանք այսօր այս դահլիճին մէջ կը Գրնտին եւ որոնց մաս կը կազմէ նաեւ օրուան մեծարեալը – քովէ քով լալով որդեկրեցիկն այն սկզբունքը, թէ կարելի է Գարբեր մԳածել բայց փոխադարձ յարմարով եւ համերաշխօրէն միասին լործել:

Աը մնայ երէցներուն կողմէ որդեկրուած եւ Գասնամեակներու յաջող փորձ անցած այս ոսկեայ ողեկիծը, փոխանցել այսօրուան աւելի երիԳասարդ սերունդի ներկայացուցիչներուն եւ համոզել Գանոնք, թէ երիԳասարդական վեղուն կիրքերը, երբեմն հարկ է Գսպել, ի շահ համայնքին լերադիր ընդհանրական շահերուն:

Պարմամէն անցնելով ներկայացուած լործին, հարկ է նշել, որ Տոքթ. Մուրէն Պայրամեանի կազմած հաԳորը վկայութիւն մըն է, անոր երկարաշունչ, յարաԳել, բծախնդիր եւ նուիրեալ աշխատանքին, որուն համար ան բոլորիս անսակարկ լնահատանքին արժանի է:

ՀաԳորը սովորական եւ հեԳարքրի ընթերցողին համար, լեցուն է հարուստ Գուեալներով եւ Գարուած աշխատանքին մէջ Գլի է կիրարկուած լիԳական մօԳեցումի ճիլը:

Այսուհանդերձ, լործին լիարժեք լնահատումը վեր ըլլալով մեր հասողութիւնէն, Գայն կը թողունք մասնալեԳ բանասէրներուն, որոնց լնահատականը շուԳով կը լսենք:

ՄեԳի համար կենսականը այս հաԳորը աշխատասիրողին արդար ուրախութեան բաժնեկից դառնալն է եւ մաղթել, որ ան շարունակէ իր ԳրԳԳումները եւ ուսումնասիրութիւնները նոյն կիրքով ու նուիրումով որալեսԳի կարենայ լրացնել իր յիշած բոլոր ակամայ բայթողումները, իբր հեԳելանք շարք մը հին թերթերու նմոշներուն չլոյութեան:

Միրելի Տոքթ. Պայրամեան, աԳլային իշխանութեան եւ ներկայ լսարանին կողմէ կը շնորհատրենք Ձեր այս արժեքատր իրալործումը եւ երկար կեանք, առողջութիւն եւ լրջի արմասբեր վասԳակ կը մաղթենք ՁեԳի:

Պերձ ԹելրԳեան

ՍՄՈՐԵԻ ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿԵՔ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ «ԱՄՊՐԵԾ» ՕՐԱԹԵՐԹԻ ԵՐԱԺՇԱԿԱՆ ԲՆԱՆՈՍ ՊԵՏՐՈՍ ԱԼԱԿԱՅՏՈՅԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԱՃԱԿԵ ՈՒՐՈՒՄԾ ՀԲԸՄ-Ի ԳԱՀԻՐԵԻ ՄԱՍՆԱՀԻՐՈՒՆ ԵՒ ԵՐԱԺՇԱԳԵՏ ՏԻՍԻ ՀԱԿ ԱԿԳԵԱՆԻ:

«Տ.»

ԿլէնԳելլ – Գա, 26. VIII. 05
Մեծայարմ Գեարք եւ Գիկնայք
ՀԲԸՄ-ի Գահիրէ.

ԱԳորալեալս, ՊեԳրոս ԱլահայԳոյեան, երաժշԳաբան Պրիլսելլի համալսարանէն եւ հրաԳարակալիր, սԳացայ եւ սԳանձնեցի Ձեր կողմէ հրաԳարակուած եւ արժեքատր լրջեղբօրս՝ Գիար Հայկ Մալեանի բծախնդիր եւ անշահախնդիր աշխատանքին ԳԳուղը եղող՝ Չուլսաճեանի եւ Գոհարիկ ՂաԳարոսեանի երկերուն նուիրուած հաԳորները Գարունակող երեք ծրարները:

Միայն լուռ ակնածանք եւ անխառն շնորհակալութիւն ունիմ ՁեԳի փոխանցելու այս կոթողական լործին առիթով: Փաստ, որ եթէ Գիրար չի խաբենք եւ իրարու վստահիկնք, լորնէ մեԳմէ արժանատրներէն ամէն մէկուն իրեն արժեքով չափելու լիԳակից եւ Գայծառ մեծութիւնը ունենանք, կ'ըլլանք Խորենայիներու, Շնորհալիներու, ԿոմիԳասներու ծնունդ Գուած աԳլին արժանատր յաջորդները:

ՀաԳար եմ Ձեր եւ Մալեանի կաԳարած աշխատանքով, կարելիի սահմաններուն մէջ Գիարի ջանամ այս լեղեցիկ ԳԳալորութեանց արժանացած, լեղեցիկ էջերը, լեղեցիկ կաԳարումներու արժանացնել:

Ձերդ՝
Պ. Ա



ԳԻՐԵՐՈՒ ԳԻՏԻՆ ԵՒ ԱՄԱՐԱՍԻ ԴՊՐՈՑԻՆ ՇԽՆԱԴՐՈՒԹԵԱՆ 1600 - ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԲԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ



Ամարասի վանքը աշխարհի ամենահին քրիստոնեական յուշարձաններէն մէկն է: Ս. Մեսրոպ Մաշտոց ստեղծելէ ետք հայերէն գիրերը, այս վանքին մէջ է, որ հիմնեց առաջին դպրոցը եւ սկսաւ հայերէն գիրերու գործածութեամբ կրթական գործունեութեան:

Ամարասի վանքը կը գտնուի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտունիի շրջանին մէջ: 4-րդ դարուն Ս. Գրիգոր Լուսաւորիչ հիմնած է Ամարասի եկեղեցին, որուն շինութիւնը աւարտած է իր թոռը՝ Գրիգորիս Եպիսկոպոսը: Նոյն դարու վերջաւորութեան Ամարասի վանքը դարձած է Եպիսկոպոսանիստ եւ իր դերը պահպանած է մինչեւ 20-րդ դար:

Ամարասի վանքը իր հիմնադրութենէն մէկ դար անց, Վարդանանց պատերազմի օրերուն աւերուած է պարսիկներու կողմէ եւ հիմնովին վերանորոգուած նոյն դարու վերջաւորութեան, Արցախի թագաւոր Վաչական բարեպաշտի կողմէ: Արաբական արշաւանքներու շրջանին, 9-րդ դար, դարձեալ աւերուած է եւ վերաշինուած իշխան Եսայի Ապու-Սուսաի հովանաւորութեամբ ու բարգաւաճած:

1223 թուականին թաթար-մոնկոլները կը կողոպտեն Ամարասի հարստութիւնները, որոնց մէջ էին 4-րդ դարէն մնացած Ս. Գրիգորիսի գաւազանը ու 30 ակերով զարդարուած ոսկեծոյլ խաչ մը: Պատմագիր Ստեփանոս Օրբելեան կը վկայէ թէ Յունաստանի կայսրին դուստրը Տեսքիան, որ մոնկոլ բռնագրաւիչին

կինն էր, կրցած էր գաւազանն ու խաչը ուղարկել տալ Կ. Պոլիս:

Աւանդութիւնը կը պատմէ, թէ 1387 թուականին երբ Լենկթիմուրի հրոսակները քար ու քանդ կ'ընեն Ամարասն ու Արցախի գանազան վանքերը, Լենկթիմուր կը հրամայէ որ իր զօրքերը շարունակեն Ամարասէն մինչեւ Արաքս գետ եւ վանքին պատերուն քարերը իրարու տալով թափեն Արաքսի մէջ: Սակայն, երբ ասպատակիչները հագիւ կը հեռանան, վանքը վերստին կը կանգնի իր նախկին շուքով:

Ամարասի վանքին ամենանշանաւոր, հնագիտական արժէք ներկայացնող մասը 4-րդ դարուն կառուցուած նահատակ Ս. Գրիգորիսի ստորգետնեայ դամբարանն է:

Ամարասի ներկայ կանգուն եկեղեցին կառուցուած է 1858 թուականին:

Ամարասի վանքին մէջ 1600 տարի առաջ Ս. Մեսրոպ Մաշտոցի հիմնած առաջին դպրոցին հիմնադրութեան առթիւ է, որ գիրերու գիտի 1600 - ամեակի ոգեկոչման նուիրուած միջոցառումներու ծիրէն ներս ՅՅ եւ ԼՂՀ կառավարութիւններու որոշումով ու Երեւանի եւ Արցախի Պետական համալսարաններու համատեղ կազմակերպութեամբ Յունիս 3-5 Արցախի մէջ տեղի ունեցած է հայերէն գիրերու գիտին եւ Ամարասի դպրոցին հիմնադրման 1600-ամեակին նուիրուած կրթական միջազգային գիտաժողով: Գիտաժողովին մասնակցած են Հայաս-



տանի եւ Արցախի կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներ, գիտնականներ, կրթական մարզի պատասխանատուներ եւ մօտ տասնհինգ մասնագետներ ԱՄՆահանգներու, Գերմանիոյ, Յոլանտայի, Անգլիոյ եւ Ռուսաստանի գիտական բարձրագոյն հաստատութիւններէն:

Համաձայն Երեւանի Պետական համալսարանի տնօրէն Ռ. Մարտիրոսեանի, շատ մեծ էր թիւը այս միջոցառումին մասնակցելու փափաք յայտնողներուն: Ներկայացուած էին մօտ 100 գիտական ուսումնասիրութիւններ, որոնցմէ գիտաժողովը ծրագրող յանձնախումբը ընտրած է 70 այն աշխատանքները որոնք առաւել սերտօրէն առընչուած էին գիտաժողովի խորագրին:

Գիտաժողովի բացման նիստին Մետրոպոլիտ Սաշտոցի հոգեւոր սիրանքին մասին զեկոյցով հանդէս եկած է ԳԱԱ ակադեմիկոս ՍԷՆ Արեւշատեանը, իսկ Արցախի Պետական Համալսարանի տնօրէն Համլէդ Գրիգորեան ներկայացուցած է արցախեան դպրութեան ակունքները եւ արդի խնդիրներն ու հեռանկարները: Երրորդ զեկուցողը եղած է Միչիկընի համալսարանի հայագիտութեան ամպիոնի վարիչ, տոքթ. Գեորգ Պարտազճեանը: Ան իր մտորումները ներկայացուցած է նոր եւ նորագոյն շրջանի հայոց լեզուի, գրականութեան եւ հայ մտքի պատմութեան ու հայագիտութեան արդի խնդիրներուն մասին:

Բացման նիստէն ետք, գիտաժողովը շարունակուած է երեք մասնախումբերով

ա- Կրթական քաղաքականութեան եւ մակավարժութեան պատմութիւն

բ- Մանկավարժութիւն եւ հոգեբանութիւն

գ- Հայագիտութիւն եւ մշակոյթ

Գիտաժողովին երրորդ օրը, մասնակիցները ներկայ եղած են Ս. Պատարագի եւ Ամարասի մէջ կազմակերպուած տօնակատարութեան, որուն շրջակայ բնակավայրերէն եւ Ստեփանակերտէն հազարաւոր մարդիկ ներկայ գտնուած են:

Արցախի մէջ նման ծաւալով եւ բովանդակութեամբ միջոցառում տեղի ունեցած էր 100 տարի առաջ, գիրերու գիտի 1500-ամեակին առթիւ, ըսած է Ռատիկ Մարտիրոսեանը, երբ չունէինք պետականութիւն, միջոցառումը նախաձեռնած էր Հայ Առաքելական Եկեղեցին: Գիրե-

րու գիտին տօնակատարութեան զուգահեռ կը հետապնդուէր հիմնադրամ մը ստեղծել, որ պիտի օժանդակէր հայ դպրութեան գործին: Սակայն երկրին մէջ տիրող իրավիճակը թոյլ չտուաւ իրագործել այդ: Այսօր, շարունակած է ան, ուրախութիւն է մեզի համար, որ միջոցառման հովանաւորն են երկու անկախ պետութիւններու կառավարութիւնները եւ եկեղեցին իր կարգին իր օրինանքի խօսքը յղած է գիտաժողովի մասնակիցներուն:

Մարտիրոսեան կարելորած է գիտաժողովը, գիրերու գիտին մասին ներկայացուած զեկուցումներուն մէջ պարզուած հետաքրքրական տեսակետներուն, վարկածներուն եւ այլ խնդիրներուն համար, որոնք յետագայ ուսումնասիրութիւններու համար կարելոր նիւթ կրնան դառնալ: Իսկ Գերմանիոյ ներկայացուցիչը, Արկադի Ղուկասեանի կազմակերպած ընդունելութեան ժամանակ ըսած է, որ միջազգային այս գիտաժողովը, Արցախի եւ արցախահայութեան մասին կարգ մը խնդիրներ արծարծելով, քաղաքական նշանակութիւն ձեռք բերած է:

Քաղուած՝

1. Շահէն Մկրտիչեանի «Լեռնային Ղարաբաղի ճարտարապետական Յուշարձանները» հատորէն

«Հայաստան» հրատարակչութիւն Երեւան, 1985

2. Ազգ Օրաթերթ թիւ 106, 6 Յոկտեմբեր 2005, Երեւան





ՇՈՋԵՐԱՆ ՏՈՋԹ. ԱՆԻ ԳԱԼԱՅԾԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԱՐԼԻՃԻՆ ՄԵՋ

Օգտուելով ամերիկահայ հոգեբան տոքթ. Անի Գալայճեանի շատ կարճ ժամանակով Գահիրե գտնուելէն, Գահիրեի ԶԲԸՄիութիւնը դասախօսական երեկոյ մը կազմակերպած էր Շաբաթ, 3 Սեպտեմբեր 2005-ին Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Fordham համալսարանի հոգեբանական ասուլիսներու դասախօս, Աղէտներու Մղձաւանջի Միջազգային Կազմակերպութեան նախագահ եւ ՄԱԿ-ի ընդհանուր հոգեբանական եւ մարդկային իրաւունքներու զանազան յանձնախումբերու անդամ տոքթ. Անի Գալայճեան ծնած է Զալէպ եւ յաճախած Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանը: Ուսումը շարունակած է Ամերիկա, ուր գաղթած էր իր ընտանիքին հետ եւ ստացած մագիստրոսի եւ տոքթորայի աստիճաններ, Նիւ Եորքի Columbia համալսարանէն հոգեբանութեան ճիւղին մէջ:

Տոքթ. Գալայճեան իր ելոյթին մէջ ներկայացուց զանազան աղէտներու պատճառաւ մղձաւանջէ տառապողներու հետ իրենց կիրարկած բուժումի ձեւը, որ կը կեդրոնանայ կեանքի իմաստին կարեւորութեան վրայ: Ան ներկայացուց նաեւ իր տարած

աշխատանքները ՄԱԿ-ի զանազան յանձնախումբերէն ներս, ինչպէս UNICEF-ի Մարդկային Իրաւանց Յանձնախումբին եւ այլ յանձնախումբերու մէջ, նաեւ անդրադարձաւ զանազան առիթներով Զայոց Ցեղասպանութեան մասին ունեցած իր ելոյթներուն:

Տոքթ. Գալայճեան նշեց նաեւ Ցեղասպանութեան եւ այլ զանգուածային աղէտներու անհատներու, ընտանիքներու եւ հաւաքականութիւններու վրայ ունեցած անդրադարձը ուսումնասիրելու համար իր հիմնած ու ղեկավարած Ամերիկա-հայկական Ընկերակցութեան աշխատանքներուն, ինչպէս նաեւ Սպիտակի երկրաշարժէն ետք հիմնուած Զայաստանի Զոգեբանական Օգնութեան Մարմին կատարած հետազոտութիւններուն, որոնց արդիւնքը ան գիրքի մը մէջ հրատարակած է:

Հանդիպման աւարտին, կազմակերպիչ մարմին դասախօսուհիին ուղուած շնորհակալական խօսքէն առաջ տեղի ունեցաւ հարց-պատասխանի բաժին մը:

ՐԱՅ ԳԻՐԵՐՈՒ ԳԻՏԻՆ 1600-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ՆՈՐՔԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԽՈՒՄԲԻՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԻՄԻՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ

Ընթացիկ տարուայ Զոկտեմբեր 9-30 ԱՄՆահանգներու Զայաստանեայց Եկեղեցւոյ Արեւելեան Թեմը եւ ԶԲԸՄիութիւնը Գիրերու Գիւտին 1600-ամեակին առթիւ միասնաբար կազմակերպած էին Երեւանի Նորքի Մանուկներու Կեդրոնին արուեստի կատարողական մրցանակակիր խումբին առաջին շրջագայութիւնը ԱՄՆահանգներու եւ Գանատայի երկայնքին:

Խումբը որ բաղկացած էր 10-15 տարեկան աւելի քան 60 պատանիներէ, միաձուլելով հայկական աւանդական արուեստատեսակները՝ երգ, պար, գործիքային երաժշտութիւն, թատերական ասմունքներ, նաեւ մարզաձեւեր եւ լարախաղեր (acrobats), անզուգական տաղանդով, ոգիով եւ աշխուժութեամբ իր արուեստը ներկայացուց Նիւ Եորքի, Ուաշինկթընի, Պոսթոնի, Շիքակոյի, Բասինի, Րիչմոնտի, Մոնրեալի եւ Թորոնթոյի մէջ:

1993 թուականի Փետրուարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի հովանաւորութեամբ եւ ԶԲԸՄիութեան

նիւթական մատակարարումով Երեւանի մէջ բացւեցան երեք Մանկական Կեդրոններ, ուր հայ պատանիներ դպրոցէն վերջ կ'երթան, զանազան դասընթացքներով իրենց տաղանդները զարգացնելու ու գիտելիքները ընդլայնելու:

Վերջերս նորոգուած կեդրոններուն մէջ երաժշտութեան, արուեստի, ձեռնային աշխատանքներու, պարի, համակարգիչի, լեզուի, պատմութեան եւ մարմնամարզանքի առօրեայ ուսուցման կը հետեւին 7-19 տարեկան 3500 աշակերտներ: Ուսուցման եւ վարչական այլ գործերու համար գոյութիւն ունի 300 հոգինոց պաշտօնէութիւն մը, որոնց կատարած աշխատանքին ու անոր ունեցած դրական ազդեցութեան ականատեսն ու վկան եղան, ելոյթներուն ներկայ գտնուող բազմահազար հայեր եւ օտարներ:

Ս. Թ



ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Շայերեն Գիրերու Գիւտը տեղի ունեցած է Վոտաւորապէս 399-406 թուականներուն, Մետրոպ Մաշտոցի կողմէ: Ան ստեղծած է 36 տառ Ա - Զ, որ կոչուած է Մաշտոցեան այբուբեն: 12-րդ Դարու վերջաւորութեան Մաշտոցեան այբուբենը ամբողջացած է Օ եւ Ֆ, ապա նաեւ եւ տառերով:

Սետրոպ Մաշտոց ծնած է Տարօն գաւառի Հացեկաց գիւղը 362 թուականին: Մեռած է 440-ին եւ թաղուած Էջմիածինէն 10 քմ. դէպի հիւսիս գտնուող Օշական գիւղի եկեղեցիին մէջ:

Գիրերու Գիւտը տեղի ունեցաւ Վառձապուի թագաւորին եւ Սահակ Պարթեւ Կաթողիկոսին օրով:

Շայերեն լեզուով գրուած առաջին նախադասութիւնն է, «ՃԱՆԱԶԵԼ ԶԻՍԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՍԱՆԱԼ ԶԲԱՆՍ ԶԱՆՃԱՐՈՅ»: Այս նախադասութիւնը թարգմանուած է Աստուածաշունչի, Սողոմոնի «Գիրը Առակաց»-էն:

Գիրերու Գիւտը եւ անոր յաջորդող Թարգմանչաց շարժումը պատճառ եղան որ հայերէնի թարգմանուին համաշխարհային գրականութեան բազմաթիւ կարեւոր գործեր յունարէնէ եւ ասորերէնէ: Այդ գործերէն շատերը այժմ գոյութիւն ունին միայն հայերէն թարգմանութիւններով. յունարէն եւ ասորերէն բնագրերը կորսուած են, ուսումնասիրողները պետք է դիմեն հայկական աղբիւրներուն:

Աստուածաշունչի առաջին գլխաւոր թարգմանիչն է Սահակ Պարթեւ Կաթողիկոսը: Միւս թարգմանիչներն են

- Մետրոպ Մաշտոց
- Եզնիկ Կողբացի
- Յովսէփ Պաղնացի
- Կորիւն Աքանչեղի
- Ղեւոնդ Վանանդեցի
- Յովնան Եկեղեցացի

Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը մշակումներով եւ լրացումներով տեսած է շուրջ 30 տարի եւ կոչուած է «Թագուհի Թարգմանութեանց» իր կատարելութեան համար:

Շայոց Պատմութեան մէջ Ե. դարը կը կոչուի Ոսկեդար: Ոսկեդարը կ'երկարի Գիրերուն Գիւտէն մինչեւ Վարդանանց պատերազմ՝ 451 թ. տեսող այն յիսնամեակը, որուն ընթացքին Մետրոպի եւ Սահակի գործակից թարգմանիչները յաջողեցան ինքնագիր եւ թարգմանական երկերով ծաղկեցնել հայ միտքը եւ գրականութիւնը:

Շայերէն տպագիր առաջին գիրքը Ուրբաթագիրքն է, տպուած 1512-ին Յակոբ Մեղապարտի կողմէ, Վենետիկի մէջ:

Շայաստանի առաջին տպարանը բացուած է Էջմիածնի մէջ 1771-ին:



Շայերէն առաջին պարբերաթերթը լոյս տեսած է 1794-ին Մատրաս – Զնդկաստան, Յարութիւն Քիւյ. Շմաւոնեանի կողմէ:

Առաջին անգամ Աստուածաշունչը հայերէնով տպագրուած է 1666-1668-ին, Ամսթերտամի մէջ, Ոսկան Երեւանցիի եւ Մատթէոս Ծառեցիի ջանքերով:

Եգիպտոսի մէջ հրատարակուած առաջին պարբերաթերթը «Արմաւենի» կիսամսեայ պարբերաթերթն է, որ հրատարակուած է 16 Մարտ 1865-ին, Գահիրէի մէջ: Խմբագիրն էր Աբրահամ Մուրատեան:

Շայերէնը կը պատկանի հնդեւրոպական լեզուներու ընտանիքին. առանձին ճիւղ մըն է եւ ունի իւրայատուկ զարգացում:

Գրաւոր հայերէնը անցած է երեք շրջաններէ:

Գրաբար, որ գործածուած է մինչեւ 19 ըդ դար:

Միջին հայերէն կամ ռամկերէն, որմէ կան բազմաթիւ գրութիւններ:

Աշխարհաբար, արեւմտահայ եւ արեւելահայ գոյգ ճիւղերով, կը սկսի 19-րդ դարու կեսերէն եւ կը շարունակուի մինչեւ այսօր:

Շայաստանի ամենահին համալսարանը Տաթևի համալսարանն է, ուր դասաւանդութիւններ տեղի ունեցած են 9-15 ըդ դարերուն:

Միջնադարեան Զայաստանի մէջ գործած են հետեւեալ համալսարանները: Տաթևի համալսարանը 9-15 ըդ դարերուն, Սանահինի՝ 10-13 ըդ դարերուն, Անիի՝ 11-13 ըդ դարերուն, Գլաձորի՝ 13-15 ըդ դարերուն, Աւագ Վանքի՝ 15 ըդ դարուն:

Երեւանի համալսարանը հիմնուած է 1920-ին:

Երեւանի Մատենադարանը հիմնուած է 1959-ին: 1962-էն ի վեր կը կրէ Մեսրոպ Մաշտոցի անունը:

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի մուտքին կը գտնուին արձանները

Մեսրոպ Մաշտոցի – հայերէն գիրերու ստեղծող (362-440)

Մովսէս Խորենացիի – հայ պատմագրութեան հայր (մօտ 410 – 5 ըդ. դարու վերջ)

Թորոս Ռոսլինի – 13 ըդ դարու հայ մանրանկարիչ, գրիչ

Գրիգոր Տաթևացիի – փիլիսոփայ, աստուածաբան, մանկավարժ (1346-1409)

Աւանիա Շիրակացիի – 7 ըդ դարու հայ գիտնական, աստղագետ, տոմարագետ

Մխիթար Գոշի – գիտնական, օրէնսդիր, առակագիր (մօտ 1120-1213) եւ **Տ**րիկի, հայ բանաստեղծ (մօտ 1230-1310)

Աշխարհի վրայ հաւաքուած աւելի քան 25.000 հայերէն ձեռագիրներ կան, որոնց մեծ մասը կը գտնուի Երեւանի Մատենադարանը, մնացեալը՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան եւ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքին մէջ: Կան նաեւ զանազան թանգարաններու, գրադարաններու, վանքերու եւ անհատներու մօտ ցրուած ձեռագիրներ:



Եգիպտահայ առաջին վարժարանը Եղիազարեան դպրատունն է, որ հիմնուած է 1828-ին, աշակերտները 1854-ին փոխադրուած են Խորենեան Վարժարան որ 1897-էն սկսեալ կոչուած է Գալուստեան Ազգային Վարժարան:

«Մաշտոց» կը նշանակէ ծիսարան: Հաւանաբար այս բառը եկած է Զ. Ա. առաջին հազարամեակին Հայաստանի մէջ գործածուած «մաշտու» («սուրբ», «սրբազան») եւ նոյն հազարամեակի երկրորդ կէսին Աքեմենեան Իրանի մէջ գործածուած «մազբա» անունէն:

Շին Հայաստանի մէջ Մաշտոց կոչուած է հեթանոսական ձօներու, ծեսերու, օրհնութիւններու եւ աղօթքներու գիրքը: Զրիստոնէութեան մուտքէն յետոյ Հայոց Եկեղեցին նոյն անունով կոչեց իր ծիսական կարգերու, օրհնութիւններու եւ աղօթքներու գիրքը:

Շասարակ կամ փոքր Մաշտոցը կը բովանդակէր քահանային վերաբերող խորհուրդներն ու արարողութիւնները (մկրտութիւն, դրոշմ, թաղում, սովորական օրհնութիւններ), Մայր Մաշտոցը՝ եպիսկոպոսին վերաբերող ծեսերն ու արարողութիւնները (ձեռնադրում, գաւազան տալ, եկեղեցի օծել, քահանայաթաղ, մեծ օրհնութիւններ), իսկ Հայր Մաշտոցը՝ կաթողիկոսին վերաբերող արարողութիւնները (կաթողիկոսի օծում, միւռնօրհնէք եւայլն ...):

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍԷՐ

Գիրքերը իմաստութեաններու շտեմարաններ են, մարդկային մտքի հանճարի պահապաններ: Երբ կը կորսուին գիրքերը, ոչինչ կը փոխարինէ զանոնք: Իսկ ոսկին կարելի է փոխարինել ոսկիով: Հզօր է այն երկիրը, որ կը պահպանէ իր ժողովուրդին մտքի հանճարին պտուղները:

Օտար լեզուով ստեղծագործող հայը կը նմանի այն ամպին, որ կտրուելով Մասիսի երկնամերձ կատարէն, կը թռչի հեռու եւ կ'անձրեւէ օտար հողի վրայ:

ԱՅԲՈՒԲԵՆԻ ԹՈՒԱՅԻՆ ՇԱՄԱԿԱՐԳԸ

ՄԻԱԲՈՐՆԵՐ		ՏԱՍՆԱԲՈՐՆԵՐ		ՀԱՐԻԻՐԱԲՈՐՆԵՐ		ՀԱԶԱՐԱԲՈՐՆԵՐ	
Ա	1	Ժ	10	Ճ	100	Ռ	1000
Բ	2	Ի	20	Մ	200	Ս	2000
Գ	3	Լ	30	Յ	300	Վ	3000
Դ	4	Խ	40	Ն	400	Տ	4000
Ե	5	Ծ	50	Շ	500	Ր	5000
Զ	6	Կ	60	Ո	600	Յ	6000
Է	7	Հ	70	Չ	700	Ի	7000
Ը	8	Չ	80	Պ	800	Փ	8000
Թ	9	Ղ	90	Ջ	900	Բ	9000



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ

Հինգշաբթի 1 Սեպտեմբեր 2005-ին լոյս աշխարհ եկաւ ԶԲԸՄ-ի Քահիրէի Մասնաճիւղի անդամներէն տեր եւ տիկին Լեւոն եւ Լալա Նիկոլեաններու երկրորդ զաւակը Անթընին:

Կը շնորհաւորենք Նորածինին ծնողքը, մեծ ծնողները, տոքթ. եւ տիկին Անթուան Նիկոլեանը եւ տեր եւ տիկին Մելքոն Շամամեանը (Հալէպ) ու Նորածինին կը մաղթենք սիրով եւ խինդով լեցուն հայաբոյր երգիք ու առողջ կեանք:



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Աղեքսանդրիոյ մարզիկներէն տեր եւ տիկին Յակոբ Կորտեան բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով մը զոր անուանած են Վահան:

Կը շնորհաւորենք Նորածինին ծնողքը, մեծ ծնողները տեր եւ տիկ. Վահան Կորտեանները եւ Աղեքսանդրիոյ ԶԲԸՄ-ի Մասնաճիւղի ատենապետ տեր եւ տիկին Սարգիս Վաճապետեանը եւ Նորածինին կը մաղթենք սիրով ու խաղաղութեամբ լեցուն կեանք:

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Քահիրէի եւ Աղեքսանդրիոյ ԶԲԸՄ-ի անդամներէն տոքթ. Տիգրան Յովակիմեանի եւ տոքթ. Շողիկ Կանիմեանի Սուրբ Պսակի խորհուրդը տեղի ունեցաւ Կիրակի 18 Սեպտեմբեր 2005-ին, Քահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, կնքահայրութեամբ փեսային մօրեղբօր՝ տիար Հմայեակ Թուֆայեանի:

Կը շնորհաւորենք ամուսնացեալ զոյգին ծնողները տեր եւ տիկին Ժիլպեր Յովակիմեանը եւ տեր եւ տիկին Յակոբ Կանիմեանը եւ Նորապսակներուն կը մաղթենք ամուսնական սիրով ու ուրախութեամբ զեղուն երգիք:

ԶԲԸՄ-ի Քահիրէի Մասնաճիւղի նախկին օժանդակ անդամ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթպօլի խումբին երկարամեայ մարզիկ տիար Կարօ Վարժապետեանի եւ օր. Հանատի Ֆարահի Ս. Պսակի խորհուրդը տեղի ունեցաւ Քահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Շաբաթ 1 Հոկտեմբեր 2005-ին, կնքահայրութեամբ փեսային եղբօր՝ Արմեն Վարժապետեանի:



Սրտագին շնորհաւորութիւններ ամուսնացեալ զոյգին, իրենց ծնողներուն տեր եւ տիկին Վահէ Վարժապետեանի, տեր եւ տիկին Ուալէ Ֆարահի, մեծ ծնողներուն տիկիններ Անահիտ Վարժապետեանի եւ Անուշ Պալայեանի: Թող Նորապսակներուն կեանքը միշտ խաղաղ ու երջանիկ ըլլայ:

Կիրակի, 9 Հոկտեմբեր 2005-ին Քահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Ս. Պսակի խորհուրդը Պր. Յակոբ Պասմաճեանի ընդ Օր. Մարինէ Պետրոսեանի, կնքահայրութեամբ տեր եւ տիկին Վիգէն Թրայեանի:

Մեր սրտագին շնորհաւորութիւնները Նորապսակ զոյգին եւ խնդակցութիւնները իրենց ծնողներուն, տիկին Մարօ Պասմաճեանին ու բժշկուհի Յասմիկ Պետրոսեանին: Թող Աստուած երջանկութիւն եւ բարգաւաճում շնորիւ երիտասարդ ամուլին:



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցաւով եւ ակամայ յապաղումով կ'արձանագրենք մահը ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի երկարամեայ վարչական անդամ տիար Միսաք Չէչճէնեանի մօր՝ Տիգրանուհիի, որ տեղի ունեցած էր 23 Յունիս 2005-ին Սիտնիի մէջ, Աւստրալիա:

Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին զաւակներուն տէր եւ տիկին Միսաք, տէր եւ տիկին Չաւէն եւ տէր եւ տիկին Վարուժան Չէչճէնեաններուն, տէր եւ տիկին Կարօ Մաժունեանի, Նաեւ թոռներուն ու բոլոր հարազատներուն: Թող հանգուցեալին բարի յիշատակը մխիթարէ սգակիրները:

Սրտի անհուն կսկիծով կը գուժենք մահը ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի երկարամեայ նախկին անդամ, «Տեղեկատու»-ի նախկին խմբագիրներէն Յակոբ Համբիկեանի, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի 23 Օգոստոս 2005-ին:

Բաժնելով ցաւը ողբացեալին այրիին՝ տիկին Անահիտի, դուստրերուն՝ տէր եւ տիկին Կայծ Թուֆայեանի, տղօք՝ Նայիրիի, թոռան՝ տէր եւ տիկին Բիթըր Կապալլայի ու բոլոր հարազատներուն, մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք անոնց:



Խոր ցաւով իմացանք անժամանակ մահը Մարգարիտ Բալասանեան - Եազըճեանի, որ տեղի ունեցած է Հինգշաբթի 8 Սեպտեմբեր 2005-ին, Երեւանի մէջ:

Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին վշտաբեկ ամուսինին՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի երկարամեայ անդամ տիար Կարպիս Եազըճեանի, զաւակներուն՝ տէր եւ տիկին Վահէ Յարութիւնեանի, օր. Շուշան Կարապետեանի ու բոլոր հարազատներուն: Թող լաւ ու պայծառ օրերու յիշատակները սփոփեն հանգուցեալին հարազատները:

1915-ի Մեծ Եղեռնէն վերապրած, 1929 թուականին ՀԲԸՄիութեան անդամ արձանագրուած Յովակիմ Սիրքէճեան իր մահկանացուն կնքեց Հինգշաբթի, 13 Հոկտեմբեր 2005-ին:

Մեր երկարամեայ վեթերան անդամին մահուան տխուր առթիւ մեր վշտակցութիւնը կը յայտնենք զաւակներուն Ալիսի եւ Անսուրեան, Շանլեան ու Սիրքէճեան ընտանիքներուն:

Մեր անդամներէն ՀՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկ Կարէն Թուլումպաճեանի տիկնոջ մօր՝ Միրէյ Նակկարի անժամանակ մահուան առթիւ, մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք տէր եւ տիկին Կարէն Թուլումպաճեանի Նաեւ հանգուցեալին բոլոր հարազատներուն:

ՀԲԸՄ-ի տարեց անդամներէն, Նուպար Սուլթանեանի մահուան առթիւ, մեր վշտակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին այրիին, զաւակներուն եւ բոլոր հարազատներուն:



ՀԲԸՄ-Ի
100 ԱՍԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԵԳԻՊՏՈՍԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ



100 Ամենակի Տօնակատարութիւններուն Հիննակյան Յայտագիրը

Օրեր	Առաւօտ	Կէտօր	Կէտօրէ Վերջ	Երեկոյ
Չորեքշաբթի 12 Մայրիկ	Հիւրերու ժամանում, փոխարարութիւն եւ արձանագրութիւն՝ պանդոկի եւ տօնակատարութիւններու Հիննակյան Յայտագրին մէջ			Քոթթէյլ ընդունելութիւն Հայաստանի Գեապանատան մէջ
Հինգշաբթի 13 Մայրիկ	Այցելութիւններ Կիզիի բուրգերուն, Սաքքարայի աստիճանաւոր բուրգին 9:00-11:00 եւ 11:30-1:30 Համագումար «Հայեցի Դաստիարակութիւն եւ Հայերէն Լեզուի Ուսուցում» քննարկ 9:00-1:30 Այցելութիւն Միջնաբերդ եւ Խան էլ Խալիի համագումարին չմասնակցողներուն համար	14:00 Ճաշ Sakkara Country Club-ի մէջ	17:00 Վերադարձ Պանդոկ	19:30 Nile Maxim գրասանաւ պտոյտ-ընթրիք Երեւանի վրայ
Ուրբաթ 14 Մայրիկ	Եգիպտական Թանգարան	1:30 – 3:00 Ճաշ Մարիոթ պանդոկին մէջ բոլոր հիւրերուն համար	3:00 – 4:30 Համագումար (պանդոկ) *** Ազատ ժամանակ համագումարին չմասնակցողներուն համար	Չայցի եւ Լոյսի ցուցադրութիւն Կիզիի բուրգերուն մօտ 6:30 Անգլերէն 8:30 Ֆրանսերէն
Շաբաթ 15 Մայրիկ	Եգիպտական Թանգարան	14:00 Ճաշ Երեւանի վրայ Le Pacha ծիփուն ճաշարանին մէջ	17:00-19:00 Գիշերու եւ Եգիպտացի ցուցահանդէս (պանդոկ)	20:00 Պարահանդէս Մարիոթ պանդոկին մէջ առաջնորդութեամբ՝ հայրենի երգչուհի Նունի Եսայեանի եւ իր նուագախումբին
Կիրակի 16 Մայրիկ	Պատարագ Մուրթ Գրիգոր Լուսատրիչ Եկեղեցոյ մէջ եւ այցելութիւն Ազգային Առաջնորդարան	14:00-17:00 Ճաշ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանին մէջ		21:00 100 ամենակի տօնակատարութիւն Գերարտեստակաւ բաժնին երոյք պիտի ունենան Յասմիկ Պապեան եւ Վարդան Մանիկոնեան Կոմիտեի եւ Սրահին մէջ
Երկուշաբթի 17 Մայրիկ Արձրանըրիս	Այցելութիւն Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցի Հոգեհանգիստ Այցելութիւն Արեքսանդրիոյ Ազգային Առաջնորդարան Այցելութիւն Արեքսանդրիոյ Գրադարանը (Bibliotheca Alexandrina)	14:00 Ճաշ Tikka Grill եւ Fish Market ճաշարաններուն մէջ	17:00 Այցելութիւն Մոնթեպալի Պալատի պարտէզները	19:00 Քոթթէյլ ընդունելութիւն Արեքսանդրիոյ ՀԲԸՄ-ի Կերտնին եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանին մէջ 22:00 Վերադարձ դիպի Գահիրէ

Address: 26, Mourad Bek Street, Heliopolis
Tel: (202) 2916444 - 4151127 - 4152478 Fax: (202) 2916916 E-mail: agbuc@menanet.net

ՀԲԸՄ 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ-ի 100-ամեակի Տօնակատարութիւններուն առաջինը տեղի պիտի ունենայ Գահիրէի մէջ Ապրիլ 12-21, 2006 Չատիկի շաբաթավերջին.

Ա. Բաժին Ապրիլ 12-17, 2006

- Խորհրդակցական Համագումար
«Հայեցի Դաստիարակութիւն եւ Հայերէն Լեզուի Ուսուցում» թեմայով
- Գիրքերու եւ Նկարներու Ցուցահանդէս
- Պարահանդէս առաջնորդութեամբ Հայաստանէն յատկապէս հրաւիրուած երգչուհի Նունէ Եսայեանի եւ իր նուագախումբին
- 100-ամեակի տօնակատարութիւն: Գեղարուեստական բաժնին ելոյթ պիտի ունենան Սորբանօ Յասմիկ Պապեան եւ Դաշնակահար Վարդան Մամիկոնեան
- Այցելութիւններ Հայաստանի Դեսպանատուն, Եկեղեցի (Գահիրէ, Աղեքսանդրիա), ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Մարգարան (Գահիրէ, Աղեքսանդրիա), եւայլն:

Բ. Բաժին Ապրիլ 18-22, 2006

- Նաւային Զբօսապտոյտու Լուքսոր-Ասուան կամ
- Զբօսապտոյտ Շարմ էլ Շէյխի Ծովափ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել

Ձեր շրջանի ՀԲԸՄ-ի մասնաճիւղին

կամ

e-mail: agbuc@menanet.net

կամ

www.agbuegypt.org





ԱՅԲՈՒԲԵՆԻ ԹՈՒԱՅԻՆ ՇԱՄԱԿԱՐԳԸ

ՄԻԱԴՈՐՆԵՐ		ՏԱՄՆԱԴՈՐՆԵՐ		ՀԱՐԻԻՐԱԴՈՐՆԵՐ		ՀԱԶԱՐԱԴՈՐՆԵՐ	
Ա	1	Ժ	10	Ճ	100	Ռ	1000
Բ	2	Ի	20	Մ	200	Ս	2000
Գ	3	Լ	30	Յ	300	Վ	3000
Դ	4	Խ	40	Ն	400	Տ	4000
Ե	5	Ծ	50	Շ	500	Ր	5000
Զ	6	Կ	60	Ո	600	Ց	6000
Է	7	Հ	70	Չ	700	Ի	7000
Ը	8	Ձ	80	Պ	800	Փ	8000
Թ	9	Ղ	90	Ջ	900	Է	9000





